

© Narek Aleksanyan



Ապակե պատից այն կողմ. արդար դատավարության իրավունքը “Մասնա ծռերի” գործերում

Հայաստանում փաստահավաք առաքելության զեկույց



HR HELSINKI FOUNDATION
for HUMAN RIGHTS




Protection of Rights
Without Borders NGO

“Ապակե պատից այն կողմ. արդար դատավարության իրավունքը “Մասնա ծոերի” գործերում”

Հայաստանում փաստահավաք առաքելության զեկույց

Քաղաքացիական համերաշխության հարթակի
փաստահավաք առաքելությունը Հայաստանում



Քաղաքացիական համերաշխության հարթակ (ՔՀՀ)

Կայքէջ՝ <http://www.civicsolidarity.org>
Ֆեյսբուք՝ [@CivicSolidarity](https://www.facebook.com/CivicSolidarity)

Ինստագրամ՝ [@civic_solidarity](https://www.instagram.com/civic_solidarity)
Թվիթեր՝ [@CivicSolidarity](https://twitter.com/CivicSolidarity)

“Հելսինկյան ասոցիացիա” ՀԿ

Կայքէջ՝ <http://www.hahr.am>
Էլ. փոստ hahr.yerevan@gmail.com

Ֆեյսբուք՝ [@hahrNGO](https://www.facebook.com/hahrNGO)
Թվիթեր՝ [@helsinkiyerevan](https://twitter.com/helsinkiyerevan)

Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ

Կայքէջ՝ www.hfhr.pl/en
Էլ. փոստ hfhr@hfhr.org.pl

Ֆեյսբուք՝ [@hfhrpl](https://www.facebook.com/hfhrpl)
Թվիթեր՝ [@hfhrpl](https://twitter.com/hfhrpl)

“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների” ՀԿ

Կայքէջ՝ <http://prwb.am>

Էլ. փոստ Info@prwb.am

Բովանդակություն

Գործադիր ամփոփում	4
Ներածություն	5
Մեթոդաբանությունը	8
Հիմնական մտահոգություններ	10
ՍՈՒՏՔ ԴԱՏԱԴԱՆՆԵ	10
Անվտանգության միջոցառումների աննախադեպ բնույթը	11
Միջամտող անվտանգության միջոցառումներ	13
Կամայականությունը և անվտանգության միջոցառումների ընտրովի բնույթ	16
Միջազգային նորմերը և առաջարկություններ	19
ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒ	23
Վստահորդների մատչելիությունը: Փաստաբանի մատչելիության իրավունքը	23
Գործի նյութերի մատչելիությունը: Քրեական դատավարության ընթացքում տեղեկատվության իրավունքը	25
Արդար դատաքննության իրավունք: “Զենքերի հավասարությունը”	25
Օրենքի գերակայության ճգնաժամ և իշխանությունների տարանջատում	28
Միջազգային նորմերը և առաջարկություններ	29
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	30
Դատական պատժամիջոցների աննախադեպ կիրառումը	31
Դատական պատժամիջոցների կիրառման պատճառները	32
Փաստաբանների պալատի կարգապահական վարույթները	33
Միջազգային նորմերը և առաջարկություններ	34
ՓԱՏՏԱԲԱՆՆԵՐԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԹԻՐԱԽԱՎՈՐՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԴԱՀԼԻՃԻՑ ԴՈՒՐ	36
Առաջարկություններ	37
Այլ մտահոգող հարցեր	38
Եզրակացություններ և առաջարկություններ	40

Գործադիր ամփոփում

Սույն զեկույցն ամփոփում է Քաղաքացիական համերաշխության հարթակի (ՔՀՀ) շրջանակներում Մարդու իրավունքների միջազգային ընկերակցության (ՄԻՄԸ) կողմից Հայաստանում իրականացված փաստահավաք առաքելության արդյունքները: Առաքելությունն իրականացվել է Հայաստանի մայրաքաղաք Երևանում, 2017թ. սեպտեմբերի 3-9-ը՝ նպատակ ունենալով հաստատել «Մասնա ծռերի» դատավարություններում մեղադրյալների պաշտպան փաստաբանների առջև ծառայած խոչընդոտների վերաբերյալ փաստերը (տե՛ս ստորև ներկայացված տեղեկությունը): Առաքելության պատվիրակներն անց են կացրել 33 հարցազրույց 45 անձանց՝ փաստաբանների, հասարակական կազմակերպությունների ակտիվիստների, լրագրողների և Փաստաբանների պալատի («ՓՊ»), ինչպես նաև Հայաստանի իշխանությունների ներկայացուցիչների հետ:

Առաքելության պատվիրակները հանգել են այն եզրակացության, որ արդար դատաքննության նորմերը խախտվել են, և փաստաբանների՝ իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու իրավունքը խոչընդոտվել է «Մասնա ծռերի» դատավարությունների ընթացքում, որոնք սկսվել են 2017 թվականի հունիսին: Հարցազրույցների և սեպտեմբերի 6-ին ու 8-ին իրականացված դատավարությունների դիտարկումների հիման վրա առաքելության պատվիրակները նշել են, որ «Մասնա ծռերի» գործերով փաստաբանները դատարանի շենք մուտք գործելու համար հանդիպել են դժվարությունների դատական կարգադրիչների կողմից իրականացվող աննախադեպ, ընտրովի գննության ընթացակարգերի պատճառով: Այս ընթացակարգերի հստակ իրավական կարգավիճակի բացակայությունը, ինչպես նաև դրանց կամայական և խտրական բնույթը թույլ չեն տվել փաստաբաններին իրականացնել իրենց մասնագիտական պարտականությունները և դրանով իսկ սպառնալիք ներկայացրել վստահորդների արդար դատաքննության իրավունքի իրականացմանը: Բացի այդ, որոշ փաստաբանների խոչընդոտել են հանդիպել իրենց վստահորդներին կալանավայրերում նախաքննական փուլում, իսկ կալանավայրերի անվտանգության աշխատակիցների կողմից փորձեր են արվել առգրավել փաստաբան-վստահորդ գործին առնչվող կոնֆիդենցիալ նյութերը: Դատական նիստերի ընթացքում փաստաբաններին երբեմն չի տրվել բանավոր միջնորդություններ, օրենքով սահմանված կարգով առարկություններ ներկայացնելու կամ հայտարարություններ անելու հնարավորություն: Առաքելության պատվիրակները նշել են նաև, որ դատարանի կողմից կիրառվող պատժամիջոցները, որոնք հանգեցրել են փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի հարուցմանը, սովորականից ավելի շատ կիրառվել են «Մասնա ծռերի» դատավարությունների ժամանակ: Ի վերջո, որոշ փաստաբաններ հայտնել են պետական պաշտոնյաների, ինչպես նաև անհայտ անձանց կողմից ստացած սպառնալիքների, ոտնձգությունների և ահաբեկումների մասին:

Սույն զեկույցում ներկայացված խնդիրների հիմնական պատճառներից մեկն իրավունքի գերակայության ճգնաժամի ընդհանուր վիճակը և Հայաստանում իշխանությունների արդյունավետ տարանջատման բացակայությունն է: Առաքելության պատվիրակների կողմից իրականացրած հարցազրույցի մասնակիցներից շատերն խոսել են դատական համակարգի և, մասնավորապես, «Մասնա ծռերի» գործերը վարող դատավորների նկատմամբ վստահության բացակայության մասին: Հարցազրույցների ժամանակ ծագել են մի շարք այլ հարցեր, որոնք դուրս են գալիս այս զեկույցի շրջանակներից և պահանջում են հետագա ուսումնասիրություն, ինչպիսիք են անմարդկային վերաբերմունքի և «Մասնա ծռերի» գործերով մեղադրյալների նկատմամբ նախաքննական փուլում կալանավայրում ուժի կիրառման մասին պնդումները, նաև մեղադրյալների համար առողջապահական ծառայությունների մատչելիության բացակայության և կալանավայրի վատ պայմանների պատճառով առաջացած խնդիրները:

Ներածություն

2016թ. հուլիսի 17-ին Երևանում տեղի են ունեցել բողոքի ցույցեր այն բանից հետո, երբ “Մասնա ծոեր” անվամբ հայտնի զինված խումբը զավթել էր Երևան քաղաքի հարավային կողմում գտնվող Էրեբունի շրջանի Ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գունդը:¹ Դեպքերի ընթացքում սպանվել է ոստիկանության սպա գնդապետ Արթուր Վանոյանը, իսկ մի քանի այլ ոստիկաններ պատանդ են վերցվել և վիրավորվել:² “Մասնա ծոեր” խումբը պահանջել է ազատ արձակել Հիմնադիր խորհրդարանի նախագահ Ժիրայր Սեֆիրյանին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը և այսպես կոչված “հանրապետության վերականգնում”:

2016թ. հուլիսի 17-19-ին մոտ 200 ցուցարարներ հավաքվել են՝ պահանջելու երաշխիքներ այն մասին, որ իշխանությունները բռնի գործողություններ չեն իրականացնի „Մասնա ծոերի” ներկայացուցիչների նկատմամբ: Ըստ տեղեկությունների՝ հուլիսի 18-ին Երևանում հակակառավարական ցույցին մասնակցել են ավելի քան 1500 ցուցարարներ՝ կոչ անելով խաղաղ լուծում տալ ճգնաժամին:³ Մարդիկ վրդովվել են այն բանից, թե կառավարությունն ինչպես է կարգավորում պատանդների հետ կապված իրավիճակը, ոստիկանների կողմից ցուցարարների նկատմամբ ոչ համաչափ ուժի կիրառումից և փողոցներում մարդկանց ձերբակալությունների:

2016թ. հուլիսի 20-ին Խորենացու փողոցում տեղի ունեցած բողոքի ցույցի ժամանակ իրականացվել են բռնություններ, երբ մոտ 500 հոգի պահանջել են թույլատրել պարենամթերք և այլ պարագաներ փոխանցել ՊՊԾ գնդի տարածքը զավթած “Մասնա ծոեր” խմբին: Միանգամից մի քանի ցուցարարներ սկսել են քարեր նետել և փորձել քաշել-հանել ոստիկանների սաղավարտներն ու վահանները: Ի պատասխան, ոստիկանությունը կիրառել է լուսաձայնային ազդեցությամբ նռնակներ:⁴ Լուսաձայնային նռնակները վիրավորել են նաև խաղաղ ցուցարարների, ովքեր կանգնած են եղել բախման վայրից որոշ հեռավորության վրա: Բացի դրանից, ոստիկանները հետապնդել և դաժան ծեծի են ենթարկել փախչող ցուցարարների: Ավելի քան 50 մարդ, այդ թվում ոստիկաններ և ցուցարարներ, տեղափոխվել են հիվանդանոց: Հաղորդվում է, որ 136 մարդիկ են ձերբակալվել, ում հասարակական խռովություններ կազմակերպելու մեղադրանք է ներկայացվել: 2016թ. հուլիսի 27-ին չորս հոգանոց շտապ օգնության ծառայության անձնակազմը պատանդ է վերցվել զինյալների կողմից: 2016թ. հուլիսի 30-ին “Մասնա ծոեր” խումբն անձնատուր է եղել: Խաղաղ երթերը շարունակվել են մի քանի օր ևս:

Ցույցերի ընթացքում քաղաքացիական հասարակության կազմակերպություններն օգնություն, նաև իրավական աջակցություն են ցուցաբերել տուժածներին և նրանց ընտանիքներին⁵ Հայաստանի կառավարությունը և նախագահ Սարգսյանը քննադատվել են արդյունավետ գործողության բացակայության և խնդրի լուծումը ոստիկանությանը և Ազգային անվտանգության ծառայությանը (ԱԱԾ) թողնելու համար, որն ավելի է սրել լարվածությունը: Լայնորեն դատապարտվել է նաև ոստիկանության

1 Մարդու իրավունքների միջազգային ընկերակցության հրատարակած “Ծեծված, այրված և խաբված հայերը ոստիկանական բռնությունների համար պատասխանատվության սպասելիս” զեկույցը տես <http://iphonline.org/wp-content/uploads/2016/09/Beaten-Burned-and-Betrayed-Armenia-report-Sept-2016.pdf>. կայքէջում

2 Նույն տեղում:

3 https://en.wikipedia.org/wiki/2016_Yerevan_hostage_crisis.

4 Հյուսիս Ռայթս Վոչի հրատարակած “Հայաստան. ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառումը ցույցերի ժամանակ” զեկույցը տես՝ www.hrw.org/news/2016/08/01/armenia-excessive-police-force-protest. կայքէջում:

5 Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորում, “Դիտորդական առաքելության զեկույց”, տես՝ http://eap-csf.eu/wp-content/uploads/Report_AM_Mission_final.pdf Թրանսփարենսի ինթրնեշնլ, “Հայտարարություն Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների զանգվածային խախտումների մասին”, տես <https://transparency.am/en/news/view/1565>.

կողմից անհամաչափ և չափազանց մեծ ուժի կիրառումը:⁶ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը (ԱլԳ ՔՀՖ) կոչ է արել երկու կողմերին խաղաղ լուծում տալ իրավիճակին:⁷ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանը կոչ է արել կատարել հետաքննություն ոստիկանների կողմից իրականացված բոլոր իրավախախտումների մասին հաղորդումների առնչությամբ, այդ թվում՝ նրանց կողմից ոչ պատշաճ վերաբերմունքի և իրավաբանական ու բժշկական օգնության հասանելիության արգելման առնչությամբ: 2016թ. հուլիսի 21-ին Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը դատապարտել է բռնության կիրառումը և կոչ արել իշխանություններին համաժողովրդական ցույցերի կարգավորման ժամանակ հարգել համաչափության սկզբունքը խաղաղ բնույթի, ինչպես նաև բռնությամբ ուղեկցվող հանրային բողոքի ակցիաների առնչությամբ, նաև հորդորել ցուցարարներին ձեռնպահ մտնելու գործողություններից՝ իրենց քաղաքացիական իրավունքների իրացման ընթացքում:⁸ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը և ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը մտահոգություն են հայտնել ձերբակալությունների և փաստաթղթերի, մամուլի ազատության ու խաղաղ հավաքների իրավունքի խախտումների հանգեցրած ուժի կիրառման վերաբերյալ:⁹

“Մասնաձեռքերի” գործերով քրեական դատավարություններն սկսվել են 2017թ. հունիսի 8-ին:¹⁰ Մեղադրյալներն սկզբնապես բաժանել են երկու խմբի՝ “Մասնա ձեռք-14” խմբի 14 և “Մասնա ձեռք-18” խմբի 18 անդամների՝ գործերում մեղադրյալների քանակի հետ կապված:¹¹ 2017-ի հոկտեմբերի սկզբին դատարանը բաժանել է “Մասնա ձեռքերի” գործերը երեք դատական խմբերի:¹² Ժիրայր Մեֆիլյանի դատավարությունն սկսվել է առանձին՝ 2017թ. մայիսին:¹³ Հուլիսյան բողոքի ցույցերի ժամանակ ձերբակալված “Նոր Հայաստան” ընդդիմադիր շարժման անդամ Անդրեաս Ղուկասյանի դատավարությունը նոր էր սկսվել, և ընդդիմադիր ակտիվիստը նախնական կալանքի տակ էր:¹⁴

Ներկայումս “Մասնա ձեռքերի” գործերը լսվում են Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Արթուր Օհանյանի, Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեսրոպ Մակյանի և Երևանի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Արտուշ Գաբրիելյանի կողմից: Առնվազն որպես պաշտպաններ 21 փաստաբաններ ներգրավված են Մասնա ձեռքերի գործերում: Բացի այդ, մեղադրյալներից ոմանք ներկայացվում են Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից նշանակված փաստաբանների կողմից:

6 <http://prwb.am/new/2017/06/08/human-rights-violations-armenia-july-30-2017/>.

7 Թրանսփարենսի ինթրնեշնլ, ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ հայտարարությունը “Մասնա ձեռքեր” միավորման կողմից իրականացված զինված հարձակման շուրջ ընթացող իրադարձությունների վերաբերյալ, տես՝ <https://transparency.am/en/news/view/1548>.

8 Եվրոպայի միություն, ԵՄ տեղական հայտարարությունը Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների առնչությամբ (21/07/2016), տես՝ http://eeas.europa.eu/archives/delegations/armenia/press_corner/all_news/news/2016/2016_07_21_en.htm

9 <http://armenia.usembassy.gov/news073016.html>, <http://www.un.am/en/news/463>.

10 <https://armenianweekly.com/2017/06/08/members-of-sasna-tsrer-go-on-trial-in-yerevan/>.

11 Ընդհանուր առմամբ, երկու գործեր ներգրավում են “Մասնա ձեռքերի” ոստիկանական կայանում տեղակայված 30 անդամների և 4 անհատների, ովքեր մեղադրվում են, օրինակ, նրանց աջակցելու և հանցագործություններ իրականացնելու փորձերի մեջ:

12 <http://hetq.am/eng/news/82397/>.

13 <https://news.am/eng/news/392097.html>.

14 www.hrw.org/news/2017/01/30/armenian-activist-stuck-detention, <http://hcv.am/en/events/armenian-national-platform-of-the-eap-civil-society-forum-is-deeply-concerned-about-the-over-12-month-detention-of-andreas-ghukasyan-member-of-new-armenia-opposition-movement/>: Հարցազրույց փաստաբան Կարեն Մեջլումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 6:

Համաձայն փաստաբանների տեղեկատվության՝ դատավարություններն սկսելու պահից ի վեր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս իրենք հանդիպում են տարբեր խոչընդոտների: Քաղաքացիական համերաշխության հարթակը (ՔՀՀ) տեղեկացվել է, որ Հայաստանում աղմկահարույց գործերում ներգրավված անկախ փաստաբանները պետական կառույցների ներկայացուցիչների կողմից ենթարկվում են հետապնդումների և արգելքների իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում:¹⁵ ՔՀՀ-ի հայտարարությանն ի պատասխան, Հայաստանի Փաստաբանների պալատը կոչ է արել իրավիճակի օբյեկտիվ և համապարփակ վերլուծություն իրականացնել փաստաբանների նկատմամբ կարգապահական միջոցների առնչությամբ: Փաստերը հաստատելու և հավաստի տեղեկություններ հավաքելու նպատակով ՔՀՀ-ն առաքել է փաստահավաք առաքելություն Հայաստան:

Առաքելության ավարտից հետո, 2017թ. սեպտեմբերին ավելի քան 180 փաստաբաններ գործադուլ են կազմակերպել ի բողոք “Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ նման վիրավորական դրսևորումների՝ որպես փաստաբանների նկատմամբ վիրավորանքի և իրենց մասնագիտական և անձնական տարածքի ու ունեցվածքի անձեռնմխելիության առումով խախտումների դեմ”: 2017թ. սեպտեմբերի 27-ին, “Մասնա ծռերի” մեղադրյալների գործերով փաստաբանները բողոքել են ընդդեմ նրա, ինչը նրանք համարում են միջամտող խուզարկություն դատարանի շենք մուտք գործելիս՝ գալով դատարան “Դադարեցրե՛ք բռնաբարել օրենքը” կարգախոսը և նախագահող դատավոր Արտուշ Գաբրիելյանի նկարը կրող կիսաթև շապիկներով:

Բացի այդ, մի շարք զարգացումներ են տեղի ունեցել զեկույցի աշխատանքների ավարտից հետո: Դրանց մի մասը դրական բնույթ են կրում, ինչպես օրինակ, սկաներների տեղակայումն այն դատարանների մուտքերում, որտեղ լսվում են “Մասնա ծռերի” գործերը, մինչդեռ մյուսները, այդ թվում, Փաստաբանների պալատի կողմից իրականացվող կարգապահական վարույթում փոփոխությունները կամ օրենսդրական առաջարկությունները, որոնք թույլ են տալիս դատավորներին տուգանքի ենթարկել փաստաբաններին, կարող են առաջացնել տարբեր մտահոգություններ:¹⁶ Հեղինակները ցանկացել են հակիրճ անդրադառնալ այս հարցերին այս պահին, քանի որ, թեև զեկույցի հիմնական կառուցվածքի մեջ ընդգրկված չլինելուն, այդ փոփոխությունները որոշ դեպքերում իրապես ազդել են առաջարկությունների ձևավորման վրա:

15 Տես՝ Քաղաքացիական համերաշխության հարթակի “Հայաստան. հետապնդումներ աղմկահարույց գործերով զբաղվող փաստաբանների նկատմամբ” հայտարարությունը, www.civicsolidarity.org/article/1490/armenia-harassment-lawyers-working-high-profile-cases.

16 “Հելսինկյան ասոցիացիա” իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից տրամադրված տեղեկություն, 2018թ. մարտի 1:

Մեթոդաբանությունը

Առաքելությունն իրականացվել է 2017թ. սեպտեմբերի 3-9-ին և կազմակերպվել է Մարդու իրավունքների միջազգային ընկերակցության կողմից, Քաղաքացիական համերաշխության հարթակի շրջանակներում: Հնգանդամ առաքելության թիմը բաղկացած էր Քաղաքացիական համերաշխության հարթակի անդամ չորս հասարակական կազմակերպություններից՝ Խոշտանգումների դեմ պայքարի մոսկովյան հանձնաժողով (Ռուսաստան), Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամ (Լեհաստան), Սոցիալական նախաձեռնությունների կենտրոն (Ուկրաինա) և Թրոյթ հատուցող (Վրաստան): Մարդու իրավունքների հելսինկյան հիմնադրամը իրականացրել է առաքելության ղեկավարի դերը:

Առաքելության ընթացքում հավաստի և համեմատական տվյալների հավաքման համար կիրառված մեթոդներն են:

- ◆ խորացված, կիսակառուցվածքային անհատական և խմբային հարցազրույցներ,
- ◆ ոչ կառուցվածքային հարցազրույցներ,
- ◆ դատավարությունների դիտարկումներ,
- ◆ հետազոտություններ:

Առաքելության ընթացքում դիտորդներն անց են կացրել 33 հարցազրույց 45 անձանց հետ: Պատասխանողների մեջ ընդգրկված էին “Մասնա ծռերի”, Ժիրայր Սեֆիլյանի և Անդրեաս Ղուկասյանի գործերում ներգրավված 14 գործող փաստաբաններ: Այս խմբից տեղեկատվությունը հավաքվել է անհատական կամ խմբային հարցազրույցների ժամանակ՝ կարճ հարցախույզի միջոցով: Հարցազրույցներն ուղղված էին պարզելու վեց հարց՝ պաշտպանյալների մատչելիություն, գործերի նյութեր և դատարաններ, հարգանք դատավարական իրավունքների նկատմամբ, կարգապահական վարույթ, դատարանից դուրս ճնշումներ կամ հետապնդումներ: Հարցազրույցից առաջ փաստաբաններին առաջարկվել է տալ հարցազրույցին մասնակցելու գրավոր համաձայնություն: Նրանց տրվել է նաև հնարավորություն տալ կամ մերժել իրենց անունը զեկույցում նշելու մասին համաձայնություն:

Մեկ այլ կարևոր պատասխանող խումբ ներառել է արդարադատության և վերահսկողության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների ներկայացուցիչների, այդ թվում՝

- ◆ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի չորս աշխատակիցներ,
- ◆ Գլխավոր դատախազության երկու աշխատակից,
- ◆ Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի նախագահի տեղակալ,¹⁷
- ◆ Արդարադատության խորհրդի աշխատակազմի ղեկավար,¹⁸
- ◆ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ:

17 Ի թիվս այլնի, Դատական դեպարտամենտն իրականացնում է նաև դատարանների ֆինանսավորումը և կարգադրիչների ծառայության ղեկավարումը: Այն նպաստում է դատական իշխանության իրականացմանը՝ տրամադրելով վարչական աջակցություն և կառավարում: Դատական դեպարտամենտի վերաբերյալ լրացուցիչ տեղեկույթ կարելի է գտնել www.court.am/?l=en&id=42 կայքէջում:

18 Արդարադատության խորհուրդը Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված 9 դատավորներից և Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված 4 իրավաբան գիտնականներից կազմված պետական մարմին է: Ի թիվս այլնի, այն սերտորեն ներգրավված է դատավորների նշանակման և աջակցության մեջ, ինչպես նաև կարգապահական վարույթներում: Արդարադատության խորհրդի մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել www.court.am/?l=en&id=25 կայքէջում:

Ընդհանուր առմամբ, հարցազրույց է անցկացվել ինը պաշտոնատար անձանց հետ: Բացի այդ, թիմը հանդիպել է նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի հետ: Մտահոգող հարցերը բարձրացնելու և քննարկելու նպատակով առաքելության պատվիրակները նախ հավաքել են փաստաբանների վկայությունները և այնուհետ հանդիպել իշխանությունների և Փաստաբանների պալատի ներկայացուցիչների հետ:

Մյուս պատասխանող խմբերն ընդգրկում էին հինգ լրագրողներ, ովքեր ներկայացրել են “Մասնա ծոերի” գործերը, քաղաքացիական հասարակության` ՀԿ տասնմեկ և միջազգային կազմակերպությունների հինգ ներկայացուցիչներ: Որպես “Մասնա ծոերի” փաստաբանների և պետական իշխանությունների միջև հակասությունների դիտորդներ, նրանց վկայություններն անհրաժեշ էին պատկերը լրացնելու և առավել առարկայական պատկերացում տալու համար

Թեև առաքելության պատվիրակները կարողացան դիտարկել որոշ դատական վարույթներ, կարևոր է նշել երկու գործոն, որոնք ազդել են արդյունքների մեկնաբանության վրա: Նախ, թիմը եկել էր Հայաստան դատարան մուտք գործելու խնդրի առաջ կանգնած փաստաբաններից նախնական տեղեկություններն ստանալուց մոտ երեք ամիս անց: Հավաքված տեղեկությունները ենթադրում են, որ իշխանությունները ժամանակի ընթացքում փոխել են դատարան մուտք գործելու ընթացակարգերը: Երկրորդ, թիմը հնարավորություն ունեցավ դիտարկել միայն երկու առանձին դեպքերի դատավարություններ երկու դատարաններում` մի քանի ժամով: Դիտարկումներն իրականացվել են 2017թ. սեպտեմբերի 6-ին Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում և 2017թ. սեպտեմբերի 8-ին` Երևանի Շենգավիթ վարչական շրջանի առաջին ատյանի դատարանում: Թեև նման դիտարկումները թույլ չտվեցին ստանալ իրավիճակի համապարփակ պատկերը, նրանք առաքելության անդամներին օգնեցին ընդհանուր առմամբ ավելի հստակ կարծիք կազմել իրավիճակի մասին:

Հիմնական մտահոգությունները

Մուտք դատարաններ



Փաստաբան Լուսինե Սահակյանը փորձում է մտնել դատարան

2017թ. օգոստոսին հրապարակված հայտարարության մեջ Քաղաքացիական համերաշխության հարթակը մտահոգություն էր արտահայտել այն մասին, որ.

“Որոշ փաստաբաններ ենթարկվել են երկարատև և միջամտող խուզարկությունների դատարան ներկայանալիս: Այն փաստը, որ վարույթի այլ մասնակիցներ, օրինակ՝ դատախազները և այլ փաստաբաններ, նման զննության չեն ենթարկվել, ենթադրում է, որ այդ ընթացակարգն ընտրովի է կիրառվել:”

Առաքելության գլխավոր խնդիրներից մեկը պարզելն էր, թե “Մասնա ծոերի” և Ժիրայր Սեֆիլյանի գործերով մեղադրյալներին իրավական աջակցության մեջ ներգրավված փաստաբաններն ինչ դժվարությունների են հանդիպում դատարանի շենքեր մուտք գործելու համար: Առաքելությունը տեղեկություններ է հավաքել “Մասնա ծոերի” փաստաբանների առջև ծառայած խոչընդոտների տեսակների և դժվարությունների հետևանքների մասին:

Հարցման մասնակից փաստաբանները մի շարք մտահոգություններ են հայտնել դատական շենքի մուտքի մոտ իշխանությունների կողմից օգտագործվող անվտանգության միջոցառումների վերաբերյալ: Այս տեղեկություններն ընդհանուր առմամբ հաստատվել են ՀԿ ներկայացուցիչների, լրագրողների և որոշ չափով նաև Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանի Հանրապետության փաստաբանների

19 Քաղաքացիական համերաշխության հարթակ, “Հայաստան. հետապնդումներ աղմկահարույց գործերով զբաղվող փաստաբանների նկատմամբ” հայտարարություն, 2017թ. օգոստոսի 9, www.civicsolidarity.org/article/1490/armenia-harassment-lawyers-working-high-profile-cases

պալատի կողմից: Այն դեպքերում, երբ տարբերություններ կային, նրանք առաջին հերթին մտահոգված էին հայաստանյան օրենքով սահմանված՝ դատարաններ մուտք գործելու ընթացքում անվտանգության ընթացակարգերի իրավական մեկնաբանությամբ: Այլ պետական մարմինների, մասնավորապես գլխավոր դատախազության և դատական համակարգի ներկայացուցիչների գնահատականները տարբերվում էին հարցվածների գնահատականներից՝ ոչ միայն ընթացակարգերի իրավական գնահատման, այլև փաստերի առումով:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՆՆԱԽԱԴԵՊ ԲՆՈՒՅԹԸ

Հարցման մասնակից փաստաբանները և ՀԿ ներկայացուցիչները համաձայնվում էին, որ “Մասնա ծոեր” և “Ժիրայր Սեֆիլյան” գործերով անվտանգության միջոցառումների և պատժամիջոցների կիրառումը աննախադեպ էր (տես՝ “Կարգապահական վարույթի կիրառումը” բաժինը): Բացի անվտանգության գնություններից, դատարան մուտք գործելիս փաստաբանների նկատմամբ անվտանգության այլ միջոցառումներ ներառել են այնպիսի տեսանկյունի տարրեր, ինչպիսիք են ապակե պատը, որն անջրպետում է լսարանի և մասնակից կողմերի միջև, և ոստիկանության ուժեղացված ծառայության ներկայությունը դատական նիստերի դահլիճում, ներառյալ քաղաքացիական հագուստով ոստիկանության աշխատակիցները:²⁰ Հարցվածները բարձրացրել են լրացուցիչ մտահոգություններ այդ միջոցառումների վերաբերյալ (տես՝ “Այլ հարցեր” բաժինը):

Փաստաբանները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները և լրագրողները հաստատել են, որ փաստաբանների անվտանգության նպատակով խուզարկությունները դատարանի շենքում առաջին անգամ դիտարկվել են 2017թ. հունիսին:²¹ Ըստ այդ հարցվողների, անցյալում նման անվտանգության նպատակով գնություն իրականացվել է միայն հասարակության նկատմամբ:²² Հարցազրույցի մասնակիցները նաև տեղեկացրել են, որ քաղաքականապես ավելի պակաս զգայուն գործերում ներգրավված փաստաբանները ստիպված չեն եղել նման խիստ անվտանգության նպատակով գնություն անցնել, թեև որոշ փաստաբաններ նկատել են, որ պրակտիկան տարածվել է այլ դատավարություններում ևս: Հարցված փաստաբաններից մեկի կարծիքով՝ այս զարգացումն իշխանությունների ռազմավարության մասն է կազմում, որպեսզի ստեղծել տպավորություն, թե նման անվտանգության նպատակով գնությունները ստանդարտ ընթացակարգեր են:²³

Անվտանգության նպատակով գնությունների ընթացակարգերի բնույթի վերաբերյալ Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը տարբերվում էր: Գլխավոր դատախազության ներկայացուցիչները պնդել են, որ անվտանգության գնությունները կանոնակարգող այդպիսի դրույթները երկար ժամանակ է կիրառության մեջ են: Նրանք նաև պնդել են, որ ընթացակարգերը կիրառվել են բացառապես բոլորի համար, լինի փաստաբան, հանրություն կամ դատախազ:²⁴ Նման դիրքորոշում արտահայտել է նաև ԱԺ պետական-իրավական հարցերի և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալը, ով նաև նկատել է, որ “Մասնա ծոերի” գործերում ներգրավված որոշ փաստաբաններ 20 տարվա պրակտիկա ունեն և մշտապես գնություն են անցնել դատական կարգադրիչների կողմից դատարան մուտք գործելու համար, մուտք են գործել ազատ և առանց առարկությունների: Նա

20 Օրինակ՝ հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ Ավետիք Բշխանյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 8, հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, այլն:

21 Հարցազրույց Օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնում, 2017թ. սեպտեմբերի 5: Հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

22 Հարցազրույց ՀԿ ներկայացուցիչի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

23 Նույն տեղում:

24 Հարցազրույցներ ՀՀ գլխավոր դատախազի գրասենյակի ներկայացուցիչների հետ, 2017թ. սեպտեմբերի 8:

նաև նշել է, որ անվտանգության նպատակով գննությունները սովորական գործընթաց են այլ երկրներում: Հարցման մասնակից իշխանությունների ներկայացուցիչներն ընդգծել են, որ կիրառված միջոցառումներն իրականացվել են անվտանգության ապահովման նպատակներով:²⁵

“ Մինչ “Մասնա ծռերի” գործերը անհատական խուզարկություններ երբեք չեն իրականացվել, նույնիսկ այլ քաղաքական գործերով: Այժմ դատական կարգադրիչի աշխատակազմը մարդկանցից պահանջում է բացել իրենց պայուսակները: Ինձնից չեն պահանջել, բայց գիտեմ, որ ուրիշներից պահանջել են”:
(Լիպարիտ Միմոնյան, փաստաբան)

Հարցազրույցների միջոցով հաստատվել է, որ ընթացակարգերի առումով առաջին փաստացի քայլը կատարվել է մետաղական դետեկտորի կիրառմամբ: Այս քայլը կիրառվել է դատական նիստերի դահլիճ մուտք գործել ցանկացող յուրաքանչյուր մարդու համար: Մետաղական դետեկտորի ազդանշանին հաջորդել է գննությունը: Հարցազրույցի մասնակից լրագրողներից մեկը նշեց, որ մետաղական դետեկտորը երբեմն ճանաչում և ազդանշանում է փոքր քանակությամբ մետաղի առկայության, օրինակ՝ ծամոնի փաթեթաթղթի կամ դեղորայքային տուփի առկայության դեպքում:²⁶ Սա հաստատվել է փաստահավաք առաքելության կողմից դատարանում իրականացված դիտարկումների ժամանակ: Շենքի մուտքից ներս առաքելության անդամներից մեկից պահանջվել է բացել պայուսակը, քանի որ դեղորայքի փաթեթն ստիպել էր մետաղական դետեկտորին ազդանշանել: Առաքելության անդամները նշել են, որ այն փաստաբանները, ովքեր միայն հեռախոս կամ դրամապանակ են կրել, մուտք են գործել դահլիճ առանց խոչընդոտների, մինչդեռ ձեռքի, մեջքի պայուսակներ կամ ձեռքի համակարգիչներ կրողները ենթարկվել են հետազա գննության: Հեռախոսը ձեռքին գտնվող դատախազին ներս են թողել նաև առանց հետազա գննության

“ Դուք գալիս եք ներս ձեր գործով, կա մի բան, որը ստիպում է սկաներին զնգալ, նրանք խնդրում են բացել պայուսակը և հանել արգելված իրերը: Նրանք ասում են ձեզ՝ “ամեն ինչ հանեք և մենք կտեսնենք”: Նման գննության համար որևէ արդարացում կամ անհրաժեշտություն չկա: Ձեռքի համակարգիչը դանակ կամ ատրճանակ չէ: Չկա նաև հարգանք պաշտպանության ինստիտուտի հանդեպ: Պաշտպանությունը դատական համակարգի մի մասն է: Դատարանը [միայն] դատավորը չէ, այն գործընթացի բոլոր կողմերն են: Պաշտպանության նկատմամբ անհարգալից վերաբերմունքն անհարգալից վերաբերմունքն է դատարանի հանդեպ”:

(Տիգրան Եգորյան, փաստաբան)

Այստեղ պետք է ընդունել, որ դատարանի շենք մուտք գործելու համար անվտանգության նպատակով

25 Հարցազրույց ԱԺ պետական-իրավական հարցերի և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի հետ, 2017թ. սեպտեմբերի 8:

26 Հարցազրույց հայ լրագրողների հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

միջոցառումների կիրառումն ինքնին հազվադեպ երևույթ է, և որ արդարադատության իրականացման ընթացքում իշխանության նպատակը դատարանում անվտանգության ապահովումն է, ինչն ինքնին չի կարող անօրինական համարվել: Իրականում, հարցված փաստաբանները սկզբունքորեն դեմ չեն եղել մետաղական դետեկտորով զննությանը: Նրանց առարկությունները կենտրոնացած էին մետաղական դետեկտորի ազդանշաններով հաջորդող զննության գործընթացի հետ կապված երեք իմասական խնդիրների վրա, որոնք են՝ անվտանգության զննությունների միջամտող բնույթը (որը փաստաբանի կարծիքով վերածվում էր խուզարկության), դատական կարգադրիչների գործողություններում կամայականությունը, այդ գործողությունների ընտրովի բնույթը, որոնք կնկարագրվեն ստորև:

ՄԻՋԱՍՏՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հարցման ենթարկված փաստաբանները հայտնել են, որ երբ մետաղական դետեկտորն ազդանշանում էր որևէ անճշտություն, նրանցից պահանջվում էր բացել պայուսակները և երբեմն հեռացնել որոշակի կամ բոլոր իրերը: Որոշ դեպքերում դատական կարգադրիչների գործողություններն ըստ էության հասել են փաստաբանների նյութերը նայելու պահանջին:²⁷ Հարցման մասնակից փաստաբաններից շատերը հրաժարվել են բացել պայուսակները և հանել իրերը՝ պնդելով, որ Հայաստանի օրենսդրության համաձայն նման ընթացակարգը խուզարկություն է: Հետագայում ևս նրանք նշել են, որ խուզարկության չի կարող ենթարկվել այն փաստաբանը, ով կատարում է իր մասնագիտական պարտականությունները: Այս առումով փաստաբանները հղում էին անում “Փաստաբանության մասին” ՀՀ օրենքի 21-րդ հոդվածին, որն արգելում է պետական մարմինների միջամտությունները փաստաբանների մասնագիտական գործունեությանը:

Փաստաբանության մասին օրենք, հոդված 21.

“Փաստաբանն իր գործունեությունն իրականացնելիս անկախ է, ղեկավարվում է միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, ...և օրենքներով, փաստաբանական պալատի կանոնադրությամբ և փաստաբանական վարքագծի կանոնագրքով:

Արգելվում է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ֆիզիկական և իրավաբանական անձանց (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցների) միջամտությունը փաստաբանական գործունեությանը: [...]”²⁸

Փաստաբանները պնդել են, որ դատական կարգադրիչների կողմից իրականացված անձնական պարագաների “զննությունը” խանգարել է իրենց՝ որպես փաստաբաններ մասնագիտական պարտականությունների իրականացմանը: Նրանք նաև մտահոգված էին, որ զննության այս ընթացակարգի միջամտող բնույթը կարող է հանգեցնել փաստաբան-վստահող արտոնությունների խախտումների, օրինակ՝ ստեղծելով դատարանի աշխատակիցների համար պոտենցիալ հնարավորություններ կարդալու գաղտնի, զգայուն տեղեկություններ պարունակող նյութերը:

Հարցազրույցների հիման վրա առաքելության պատվիրակները նշել են, որ դատարան մուտքի համար դատական կարգադրիչների զննության կարգի իրավական կարգավիճակը հստակ սահմանված չէ Հայաստանի օրենսդրությամբ: Հարցազրույցի մասնակիցներն օգտագործել են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են “խուզարկություն”, “զննություն”, “անվտանգության նպատակով ստուգում” և այլն: “Խուզարկություն” և “անձնական խուզարկություն”, ինչպես նաև “զննություն” եզրույթները, օրինակ,

27 Հարցազրույց փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

28 Փաստաբանության մասին օրենքը տես www.legislationline.org/topics/country/45/topic/8 կայքէջում:

օգտագործվում են ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքում (համապատասխանաբար 225, 229 և 217 հոդվածներ), սակայն հարկ է նշել, որ դրանք վերաբերում են քրեական վարույթին առնչվող առանձին իրավական հասկացությունների:²⁹

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները “գննություն” են որակել այն ամենի մակերեսային ստուգումը, ինչը հեշտությամբ տեսանելի է առանց հնարավոր թաքցրած իրերի հայտնաբերման համար հետագա ակտիվ փորձերի, իսկ “խուզարկությունը” առավելապես որպես միջամտող ընթացակարգ, որի միջոցով որոնում իրականացնողն ակտիվ դերը է ստանձնում՝ փորձելով գտնել թաքցրած իրերը:³⁰ Այնուամենայնիվ, այս երկու իրավական գործիքների միջև գիծը հստակ սահմանված չէ՝ գործնականում լայն մեկնաբանության հնարավորություն տալով:³¹

“ [..] Դա ավելի մեծ խնդիր է, քան պարզապես մեկ դեպքի օրինական կամ անօրինական լինելը, քանի որ դա այն չէ, թե օրենքն ասում է “ դուք չեք կարող խուզարկել փաստաբանին, չեք կարող պահանջել փաստաբանից բացել իր պայուսակը”, և ապա ինչ-որ մեկը պահանջում է փաստաբանին բացել պայուսակը: Հասկանում եք, իրավական կանոնակարգերը հստակ սահմանված չեն: Եվ երբ օրենքը հստակ սահմանված չէ, դուք կարող եք մեկնաբանել այն այս կերպ, իսկ մեկ այլ անձ կարող է մեկնաբանել այլ կերպ: Այսպիսով, կանոնակարգերը բաց են Ֆսում մեկնաբանման համար, և սա այն է, ինչի դեմ մենք փորձում ենք պայքարել: Դուք չեք կարող ունենալ կանոնակարգեր, որոնք հանգեցնում են մեկնաբանությունների լայն շարքի, [և] օգտագործել ա՛յն մեկնաբանությունը, որը լավ է”:
(Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչ)

Փաստաբանի մասնագիտական գործունեության իրականացման երաշխիքների մասին վերջին իրավական վերլուծության մեջ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը նկատել է, որ “փաստաբանի մասնագիտական աշխատանքն արդարադատության իրականացման անբաժանելի մասն է և ենթակա է հատուկ երաշխիքների: Փաստաբանների հանրային հեղինակությունը կարևոր երաշխիք է պաշտպանյալի իրավունքների արդյունավետ պաշտպանության և երկրում մարդու իրավունքների պաշտպանության զարգացման համար”:

- ◆ Պետության ցանկացած ներկայացուցիչ, այդ թվում՝ քրեակատարողական ծառայողը կամ դատական կարգադրիչը, պարտավոր են առաջնորդվել փաստաբանի բարեխղճության և ազնվության կանխավարկածով.
- ◆ Պետությունը պարտավոր է ապահովել փաստաբան-վստահորդ արտոնյալ հաղորդակցության և փաստաբանական գաղտնիքի պաշտպանվածությունը՝ անկախ տեխնիկական միջոցների առկայությունից.
- ◆ Ստուգողական ցանկացած գործողություն պետք է իրականացվի փաստաբանի և նրա վստահորդի շահերի հետ հավասարակշռման և հիմքերի պատշաճ առկայության պայմաններում.

29 Տես՝ ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքը, www.parliament.am/law_docs/010998HO248eng.pdf?lang=eng

30 Հարցազրույց Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչների հետ, 2017թ. սեպտեմբերի 6:

31 Հարցազրույց ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, 2017թ. սեպտեմբերի 6: Հարցազրույց Փաստաբանների պալատի նախագահի հետ, 2017թ. սեպտեմբերի 7:

- ◊ Պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ զննության ենթարկվելուց հրաժարվելու մասին փաստաբանների պատճառաբանությունները դատական կարգադրիչների կողմից որոշումներ կայացնելիս համաչափության տեսանկյունից հաշվի չեն առնվել: Չննության՝ գործողությունների որոշակի շրջանակով չսահմանափակված ընթացակարգից հրաժարումն անկախ ամեն ինչից առաջացրել է խիստ հետևանք՝ դատական նիստերի դահլիճ մուտքն արգելելը:
- ◊ Անհրաժեշտ է իրականացնել “զննություն” և “խուզարկություն” հասկացությունների հստակ տարանջատում, բացահայտել դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը կազմող գործողությունների շրջանակը՝ հաշվի առնելով կոնկրետ ոլորտում դրա նշանակության իրավական առանձնահատկությունները: Պետք է պատշաճ արտացոլել փաստաբաններին խուզարկելու օրենսդրական արգելքը”: [...]³²

Դիտորդական առաքելության կողմից հավաքված տեղեկույթի լույսի ներքո սույն զեկույցը թողարկող կազմակերպությունները կհաղթեն այս եզրակացությունները: Օրենսդրական անորոշությունը չի կարող կիրառվել ի փաստ իրենց մասնագիտական պարտականությունները կատարող փաստաբանների և նրանց պաշտպանյալների: Արդար դատաբանության իրավունքի ապահովման օրինական շահերը, այդ թվում՝ փաստաբանի և հարակից փաստաբան-վստահորդ արտոնության անհրաժեշտությունը պետք է պաշտպանվի օրենքով: Ցանկացած միջոցառումներ, որոնք կարող են խոչընդոտել այդ իրավունքներին, պետք է հստակորեն սահմանվեն օրենքով, լինեն համաչափ, հետապնդեն օրինական նպատակներ և չպետք է խախտեն այդ իրավունքների էությունը կամ հանգեցնեն դրանց մերժմանը:

Հարկ է նաև նշել, որ դատարանում գտնվելիս դիտորդական առաքելությունը դիտարկել է, որ նրանք, ովքեր պայուսակներ չէին կրում, ինչպես փաստաբանները, այնպես էլ դատախազները, զննվել են մետաղյա դետեկտորի միջոցով և թույլատրվել մտնել դատարան: Որոշ փաստաբաններ հարցազրույցների ժամանակ նաև նշել են, որ իրենք խոչընդոտների չեն հանդիպել դատարանի շենք մուտք գործելու համար, քանի որ միայն բջջային հեռախոս կամ պլանշետ են ունեցել:³³ Հարցման ենթարկված այլ փաստաբաններ հայտնել են, որ իրենք իրենց վարվելակերպը փոխել են, որպեսզի կարողանան անցնել մետաղական դետեկտորի զննությունը՝ առանց ավելի մանրամասն խուզարկության ենթարկվելու: ³⁴

“Քանի որ իմ պաշտպանյալի առողջությունը և կյանքն է վտանգվում, ես ուզում եմ ներկա լինել դատարանի դահլիճում: Ներկա լինելու համար ստիպված եմ ընտրել մետաղական մասեր չունեցող պայուսակ, քանի որ դրանք կգրանցվեն մետաղական դետեկտորի կողմից: Ես նաև ստիպված եմ ձեռքիս կրել ձեռքի համակարգիչը, քանի որ այն ունի մետաղական մաս”:
(Հայարփի Սարգսյան, փաստաբան)

Թեև սա կարող է լինել արդյունավետ ռազմավարություն փաստաբանների համար, այն չպետք է դիտվի որպես խնդրի լուծում: Դատական գործընթացում փաստաբանների կարգավիճակն արտացոլող հստակ օրենսդրության և համապատասխան երաշխիքների բացակայությունը նշանակում է, որ չկա որևէ մեխանիզմ, որը կարող է կանխել խուզարկության ներկայիս ընթացակարգերը ավելի միջամտող դառնալուց:³⁵

32 Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, անզլերեն զեկույցը տես՝ www.ombuds.am/en/media/iravakan-verlucutyun.html

33 Հարցազրույց փաստաբան Հարություն Բաղդասարյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4: Հարցազրույց փաստաբան Կարեն Մեջլումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 6:

34 Հարցազրույց փաստաբան Հայարփի սարգսյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

35 Հարցազրույց ՀԿ ներկայացուցիչների հետ, 2017թ. սեպտեմբերի 7:



Փաստաբան Տիգրան Հայրապետյանը (ձախում) փորձում է մուտք գործել դատարան: Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը (կենտրոնում): Աղբյուրը www.azatutyun.am/a/28588638.html

Առաքելության թիմի կողմից փաստաբանների և ՀԿ ներկայացուցիչների հետ հարցազրույցները փաստել են, որ դատական կարգադրիչները հետևողական չեն եղել մարդկանց տարբեր խմբերի նկատմամբ վերաբերմունքի մեջ, ընթացակարգային կանոնները կիրառելիս (օրինակ՝ տեխնիկական միջոցներ կամ որոշակի խմբերի նկատմամբ սահմանափակումներ, այլն), նաև անձանց հրաժարման դեպքերում կիրառել են ավելի խիստ զննության ընթացակարգ: Հետևաբար, մի շարք դեպքերում կարգադրիչների վերաբերմունքը կարելի է ընտրովի և կամայական համարել:

Փաստաբանների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ զրույցները պարզել են, որ դատական կարգադրիչների կողմից իրականացվող անվտանգության նպատակով իջոցառումների շրջանակը ժամանակի ընթացքում փոխվել է: Ի սկզբանե զննության են ենթարկվել միայն “Մասնա ծոերի” գործերով զբաղվող որոշ փաստաբաններ, այլ գործերում ներգրավված և այլ մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, օրինակ՝ դատախազները զննության չեն ենթարկվել:³⁶ Փաստորեն, ինչպես նշել են որոշ փաստաբաններ, նույնիսկ զննությունը հետևողականորեն չի կիրառվել “Մասնա ծոերի” գործերով փաստաբանների նկատմամբ: Նրանք երբեմն ստուգվել են, սակայն ոչ միշտ:³⁷ Մի դեպքում, փաստաբանին, որը այլ դեպքերում կարող էր զննության ենթարկվել, թույլատրվել է դատարան մուտք գործել Փաստաբանների պալատի նախագահի անմիջական միջամտությունից հետո, ով տեսել է, թե ինչ է կատարվում: Մա ներկայացվել է որպես փաստաբանին արված շնորհ:³⁸

Հարցման մասնակից փաստաբանների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքով, երբ իրականացվող զննությունների ընտրովի բնույթի վերաբերյալ հանրային քննարկումներ են տեղի ունեցել, դատական կարգադրիչները զննության ընթացակարգերն

36 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոն, “Տեղեկագիր 2016թ. հուլիսի 19-ին “Մասնա ծոեր” խմբի կողմից Երևանում ՀՀ ռստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքի գրավման առնչությամբ հարուցված քրեական գործերի դատավարությունների արդյունքների մասին”:

37 Հարցազրույց փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5, հարցազրույց փաստաբան Լիպարիտ Միմոնյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

38 Հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

իրականացրել են նաև դատախազների նկատմամբ:³⁹ Առաքելության անդամները կարողացել են դիտարկել, որ թեև մետաղական դետեկտորն ազդանշանել է, երբ դատախազը մտել է դատական նիստերի դահլիճ “Մասնա ծռերի” դատավարության համար, նրան թույլատրվել է անարգել անցնել: Նա սակայն պայուսակ չի կրել, և միգուցե այդ պատճառով կարգադրիչները չեն պահանջել զննություն անցնել: Ինչպես նշվեց վերևում, գլխավոր դատախազության և Ազգային ժողովի ներկայացուցիչները, ովքեր հարցազրույց են տվել, պնդել են, որ զննության ընթացակարգերը մշտապես գոյություն են ունեցել և հավասարապես վերաբերել են բոլորին:⁴⁰ Այնուամենայնիվ, սա որևէ այլ հարցազրույցով չի հաստատվել:

Հարցազրույցների ժամանակ բոլոր գրուցակիցները, ներառյալ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի և Փաստաբանների պալատի ներկայացուցիչները, նշել են, որ դատարանի շենք մուտք գործող անձանց համար չկա արգելված իրերի ցանկ, որով դատական կարգադրիչները կարող են ղեկավարվել իրենց աշխատանքում: Ինչպես տեղեկացրել են Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչներն առաքելության պատվիրակներին, արգելված իրերի ցանկ գոյություն ունի միայն քրեակատարողական հիմնարկների վերաբերյալ: Պաշտոնական փաստաթղթի բացակայությունը դատական կարգադրիչների անհատական հայեցողությանն է թողել որոշելու, թե ինչը կարելի է և ինչ չի կարելի ներս տանել դատարան: Փաստաբանները հայտնել են, որ երբ նրանց ասվել է ի ցույց հանել իրենց պայուսակների բովանդակությունը, նրանք դատական կարգադրիչներից պահանջել են արգելված իրերի ցանկ, սակայն որևէ մեկ ցանկ երբեք չի ներկայացվել:⁴¹ Փաստաբանների պալատի նախագահի և Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերով մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի հետ հարցազրույցների ժամանակ առաքելության անդամները պարզել են, որ նման ցանկի պատրաստման աշխատանքներն ընթացքի մեջ են,⁴² և առաքելության իրականացումից հետո արգելված իրերի ցանկն ընդունվել է:

Դատական կարգադրիչի կողմից “խուզարկության” ենթարկվելու փաստաբանի հրաժարումը կարող էր ունենալ տարբեր հետևանքներ: Շատ հաճախ փաստաբաններին թույլ չի տրվել մուտք գործել դատարանի շենք և հետևաբար նրանք չեն կարողացել մասնակցել դատական նիստին: Օրինակ, Արայիկ Պապիկյանը հաշվել է, որ մոտ 10 անգամ իրեն թույլ չի տրվել դատարան մուտք գործել, քանի որ հրաժարվել է խուզարկության ենթարկվել: Հարցվողները տեղեկացրել են նաև, որ որոշ փաստաբաններ գրեթե ամբողջովին դուրս են մնացել դատական գործընթացից՝ հրաժարվելով ենթարկվել զննության նման ընթացակարգով, որը նրանց կարծիքով խուզարկություն է: Սակայն միշտ չէ, որ այդպես է եղել: Երբեմն փաստաբաններին ի վերջո թույլատրվել են մուտք գործել դատարան, ի հեճուկս խուզարկումներից հրաժարմանը կամ դատական կարգադրիչների ծառայության պաշտոնյաների հետ վիճաբանությանը:⁴³ Մյուս կողմից, այլ փաստաբաններին մուտքը արգելվել է, թեև հաջողությամբ անցել են զննությունը⁴⁴

39 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոն, նույն տեղում: Հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

40 Հարցազրույցներ գլխավոր դատախազի գրասենյակի ներկայացուցիչների հետ, 2017թ. սեպտեմբերի 8, հարցազրույց Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի հետ, 2017թ. սեպտեմբերի 8:

41 Օրինակ, հարցազրույց փաստաբան Հայկ Ալումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

42 Հարցազրույց Փաստաբանների պալատի նախագահի հետ, 2017թ. սեպտեմբերի 7, հարցազրույց Ազգային ժողովի պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալի հետ, 2017թ. սեպտեմբերի 8:

43 Հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

44 Հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

“Օրեր էին լինում, երբ խուզարկությունից հետո մեզ թույլատրում էին ներս մտնել, և օրեր էին լինում, երբ թույլ չէին տալիս: Եվ մենք նաև արձանագրել ենք, որ երբ նրանք ասում էին, որ անցել ենք զննությունը, սակայն նաև թույլ չէին տալիս մուտք գործել դատարանի դահլիճ: Բարձրաձայնելուց հետո միայն նրանք սկսում էին մեզ [ներս] թողնել քանի որ: Մենք ավելի հաճախ թույլատրում էին ներս մտնել, քան թե մերժում”: (Լուսինե Սահակյան, փաստաբան)

Առաքելությունն արձանագրել է, որ հայաստանյան օրենքը չի հստակեցնում, թե երբ դատական կարգադրիչները կարող են իրականացնել անվտանգության նպատակով զննություն և ովքեր պետք է կամ չպետք է ենթարկվեն դրան:⁴⁵ Դատական օրենսգրքի 198-րդ հոդվածում նշվում է, որ դատական կարգադրիչների ծառայության խնդիրը, այլնի շարքում, դատարանի տարածքում հասարակական կարգի և անվտանգության ապահովումն է:⁴⁶ 199-րդ հոդվածը սահմանում է կարգադրիչների ծառայության գործունեության սկզբունքները, այն, որ, օրինակ, պետք է իրականացվի “օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և թափանցիկության սկզբունքների խստիվ պահպանմամբ”: Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման ցանկացած դեպքում դատական կարգադրիչները պարտավոր են անմիջապես ներկայացնել սահմանափակման հիմքերը և բացատրել նրա իրավունքներն ու պարտականությունները:

Դատական օրենսգրքի հոդված 198

1. Դատական կարգադրիչների ծառայության խնդիրներն են սույն օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան ապահովել՝

- 1) դատարանում դատավորի, դատավարության մասնակիցների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից.
- 2) դատարանի տարածքում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը.
- 3) տեղում անմիջական կատարման ենթակա դատարանի կարգադրությունների կատարումը.
- 4) դատարանի գույքի, ինչպես նաև շենքի եւ դրա սպասարկման տարածքի պահպանությունը:

2. Դատական կարգադրիչների ծառայությունը իր խնդիրներն իրականացնելու նպատակով համագործակցում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության և պետական այլ մարմինների հետ՝ տեղեկատվություն փոխանակելով, համատեղ գործողություններ կազմակերպելով և իրականացնելով, ինչպես նաև միմյանց ծառայությունն իրականացնելիս անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելով:

Բացի այդ, Դատական օրենսգրքի 214-րդ հոդվածում նշվում է, որ դատական կարգադրիչներն իրավունք ունեն զննության ենթարկել դատարան կամ դատական նիստերի դահլիճ մուտք գործող

45 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոն, նույն տեղում:

46 ՀՀ Դատական օրենսգրքը, տես՝ www.court.am/upload/file/Judicial%20Code%20Eng%20final%20-%2020290607.pdf

անձանց և նրանց իրերը, պարտավոր են իրենց վերապահված իրավունքներն իրականացնել օրենքին համապատասխան և իրենց գործունեության մեջ թույլ չտալ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտում:⁴⁷ Այնուամենայնիվ, օրենսդրության կամ գործադիր ակտերում դատական կարգադրիչների ծառայության գործունեության իրականացման վերաբերյալ որևէ այլ մանրամասներ չեն նշվում, ասենք, զննության իրականացման ձևերի կամ տեխնիկական սարքերի կիրառման ուղեցույցների վերաբերյալ: Մա ստեղծում է օրենսդրական վակուում, ինչը հնարավորություն է տալիս դատական կարգադրիչներին խոչընդոտել մարդու իրավունքների, մասնավորապես անձնական կյանքի իրավունքի և արդար դատաքննության իրավունքի իրականացմանը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվտանգության նպատակով միջոցառումների և դատարան ֆիզիկապես մուտք գործելու մատչելիության ընթացակարգերի հետ կապված հատուկ միջազգային նորմեր չկան: Այնուամենայնիվ, ցանկացած ձեռնարկվող միջոցառում պետք է համապատասխանի պետության կողմից ստանձնած մարդու իրավունքների միջազգային պարտավորություններին: Ստուգման ընթացակարգերի (զննությունն թե խուզարկությունն) վերաբերյալ հիմնական պարտավորությունները ներառում են հարգանքն անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքի (զաղտնիության իրավունքի) և արդար դատաքննության իրավունքի նկատմամբ:

Գաղտնիության իրավունքը նախատեսված է մի շարք միջազգային փաստաթղթերով: Եվրոպական համատեքստում ամենաազդեցիկ կերպով այս նորմը սահմանվում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 8-րդ հոդվածում, որն անդրադառնում է անձնական և ընտանեկան կյանքի հարգանքին և սահմանում այդ իրավունքի հնարավոր սահմանափակումները:

ՄԻԵԿ հոդված 8

1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:
2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով

ՄԻԵԿ 8-րդ հոդվածի հիման վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ, դատարան) մշակել է ենթադրյալ խախտումների նկատմամբ կիրառվող թեստ: Դատարանը նախ քննության է ենթարկում, թե արդյո՞ք առկա է միջամտություն իրավունքի նկատմամբ: Այնուհետև շարունակում է հետազոտել, որպեսզի պարզի, թե արդյո՞ք միջամտությունը եղել է օրենքի համաձայն, ծառայել է օրինական նպատակի և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Օրինակ,

47 Տե՛ս նույն տեղում:

ՄԻԵԴ-ը հաշվի է առել փաստաբան-վստահորդ գաղտնիության խախտումները հոդված 8-ի լույսի ներքո⁴⁸ Այս նորմը պետք է ապահովվի նաև դատարան մուտք գործելիս Հայաստանի իշխանությունների կողմից կիրառվող անվտանգության ընթացակարգերի համատեքստում: Պետության կողմից կիրառվող ցանկացած անվտանգության նպատակով միջոցառում պետք է համապատասխանի օրենքին (որը, օրինակ, կանխատեսելի է), օրինական իր նպատակի և համամասնության (անհրաժեշտ և բավարար) առումով:

Հաշվի առնելով փաստաբանների կարևոր դերը քրեական արդարադատության իրականացման գործում, հնարավոր է նաև, որ նրանց գործին միջամտությունը դիտարկվի որպես արդար դատաքննության իրավունքի հավանական խախտում: Թեև, ինչպես նշվեց վերևում, ՄԻԵԴ-ը փաստաբան-վստահորդ արտոնությունը դիտարկել է գաղտնիության իրավունքի տեսանկյունից, այն նաև մատնանշել է այն հնարավոր խնդիրները, որոնք նման միջամտությունները կարող են առաջացնել արդար դատաքննության իրավունքը սահմանող ՄԻԵԿ 6-րդ հոդվածով:

“Հաշվի առնելով այն, որ նյութերը փաստացի գնվում են, ավելի կարևոր է այն, որ տվյալ հանգամանքներում խուզարկությունն անհամաչափ է մասնագիտական գաղտնիությանը, այս առումով, պետք է հիշել, որ ինչ վերաբերում է փաստաբանին, փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգությանը, արդարադատության իրականացման գործում կարող է ունենալ հետևանքներ, որոնք անխուսափելիորեն կխախտեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված՝ արդար դատաքննության իրավունքը: Ի լրումն սրա պետք է նշել նաև, որ ուղեկցվող հրապարակումը կարող էր ունենալ բացասական հետևանքներ դիմողի մասնագիտական հեղինակությանը ինչպես իր հաճախորդների մոտ, այնպես էլ հանրության մոտ ընդհանրապես”:⁴⁹

Ի թիվս այլնի, արդար դատավարության իրավունքի երաշխիքը կազմված է ինքնին իրավունքից կամ պաշտպանների միջոցով պաշտպանվելու իրավունքից: Այս իրավունքը տեղ է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (“ՔՔԻՄ”) և ՄԻԵԿ-ում

ՔՔԻՄ հոդված 14 (3) (դ)

“[...] 3. Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ ունի առնվազն հետևյալ երաշխիքների իրավունքը՝ լիակատար հավասարության հիման վրա. [...]”

դ/ դատվի իր ներկայությամբ և պաշտպանի իրեն անձամբ կամ իր իսկ ընտրած պաշտպանի միջոցով. եթե նա չունի պաշտպան՝ տեղեկացված լինի այդ իրավունքի մասին և ունենա իր համար նշանակված պաշտպան ցանկացած դեպքում, երբ դա պահանջում են արդարադատության շահերը, նրա համար անհատույց բոլոր այն դեպքերում, եթե նա բավականաչափ միջոցներ չունի այդ պաշտպանին վճարելու համար: [...]”⁵⁰

48 Տե՛ս, օրինակ, Սպրոնկեն Թ., Ֆերմոն Ջ., “Փաստաբան-հաճախորդ արտոնության պաշտպանությունը Եվրոպայում”, Փենսիլվանիա նահանգի պարբերականը միջազգային իրավունքի մասին, հատոր 27.2, էջ 447, տես՝ <https://elibrary.law.psu.edu/cgi/viewcontent.cgi?article=1252&context=pslr>

49 ՄԻԵԴ, 1992թ. դեկտեմբերի 16-ի դատավճիռ, Նիմֆն ընդդեմ Գերմանիայի, դիմում թիվ 13710/88, <http://www.refworld.org/cases,ECHR,3f32560b4.html>:

50 ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, տես՝ www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CCPR.aspx

“[...] 3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

(գ) պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը: [...]”⁵¹

Ավելին, ՄԱԿ-ի փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները սահմանում են փաստաբանների պարտավորությունը, ի թիվս այլնի, պաշտպանել մասնագիտության արժանապատվությունը, աջակցել իրենց վստահորդներին դատարաններում և պաշտպանել մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները: Սա գուցորդվում է փաստաբանների պարտականությունների կատարմանը վստահ միջամտությունից ձեռնպահ մնալու իշխանությունների պարտականությանը:

Փաստաբանների ի դերին վերաբերող հիմնարար սկզբունքները

“12. Փաստաբանները բոլոր հանգամանքներում պահպանում են իրենց մասնագիտությանը բնորոշ պատիճ ու արժանապատվությունը՝ որպես արդարադատության իրականացման բնագավառի պատասխանատու աշխատողներ:

13. Իրենց հաճախորդների նկատմամբ փաստաբանը կատարում են հետևյալ գործառույթները. [...]

գ) անհրաժեշտության դեպքում հաճախորդներին օգնություն ցույց տալը դատարաններում, տրիբունալներում կամ վարչական մարմիններում:

[...]

14. Իրենց հաճախորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության շահերը պահպանելիս փաստաբանները պետք է նպաստեն ազգային և միջազգային իրավունքներով ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանը եւ բոլոր պարագաներում գործեն անկախ ու բարեխղճորեն՝ օրենքին և ընդունված նորմերին ու փաստաբանի մասնագիտական բարոյականությանը համապատասխան:

[...]

16. Կառավարություններն ապահովում են, որպեսզի փաստաբանները (ա) կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում, [...] (գ) դատական հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաև չենթարկվեն նման հետապնդման և պատժամիջոցների սպառնալիքների”:⁵²

51 Եվրոպայի խորհուրդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա, տես՝ www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf

52 ՄԱԿ-ի կողմից ընդունված “Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները”: Տես՝ www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/RoleOfLawyers.aspx

Դիտորդական առաքելության կողմից նկատվել է, որ իրավիճակը բացասական ազդեցություն է թողել պաշտպանյալների արդար դատաքնության իրավունքի վրա, քանի որ այն հաճախ հանգեցրել է պաշտպանների՝ դատարանի դահլիճից բացակայելուն: Դատական կարգադրիչների կողմից կիրառվող պրակտիկան միջամտում է փաստաբանների պարտականությունների իրականացմանը և երբեմն սպառնում փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիությանը, մասնավորապես, երբ փաստաբաններից պահանջվում է հանել նյութերը պայուսակներից: Դատավորների և փաստաբանների անկախության մասին Հատուկ զեկուցողը նշել է, որ «[ն]ախապայմանները, որպեսզի փաստաբանները կարողանան անհրաժեշտ կերպով տրամադրել իրավաբանական խորհրդատվություն, ներառում են [...] իրենց հաճախորդների հետ հարաբերությունների գաղտնիությունը», և որ «[փ]աստաբանների թղթապանակներն ու փաստաթղթերը պետք է առգրավումից կամ զննությունից պաշտպանված լինեն օրենքով և գործնականում [...]»⁵³ Կանոնակարգի բացակայության դեպքում, դատական կարգադրիչները գործողությունները կարող են կրել ընտրովի և կամայական բնույթ: Այդ իսկ պատճառով, հավաքված տեղեկությունների լույսի ներքո, որոշ դեպքերում արձագանքելով Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցին՝ Հայաստանում փաստահավաք առաքելությունը Հայաստանի իշխանություններին առաջարկում է՝

- ◇ Անհապաղ ընդունել օրենսդրություն, որը հստակորեն տարբերակում է անվտանգության նպատակով զննության և խուզարկության միջև դատական շենք մուտք գործելու համատեքստում:
- ◇ Կազմակերպել զննությունն այնպես, որ այն
 - չկրի խտրական, կամայական կամ անհամաչափ բնույթ և բացառի կարգադրիչների ծառայության աշխատակիցների կողմից հայեցողական մոտեցումը,
 - հաշվի առնի փաստաբանների հատուկ կարգավիճակը և նրանց կարևորությունն արդարադատության իրականացման գործում՝ ապահովելով մեղադրյալի պաշտպանվելու իրավունքը, փաստաբան-վստահորդ արտոնությունը և իրավաբանական մասնագիտության նկատմամբ արժանապատվությունը:
- ◇ Ընդունել օրենսդրություն, որն արգելում է իր պարտականությունները կատարող փաստաբանի խուզարկությունը, եթե դա չունի հստակ ձևակերպված հիմքեր, հետապնդում է ժողովրդավարական հասարակությունում օրինական նպատակ և անհրաժեշտ է, առանց կանխակալ կարծիքի, մեղադրյալների արդար դատաքնության իրավունքը, մասնավորապես՝ փաստաբան-վստահորդ արտոնությունն ապահովելու համար:
- ◇ Ստեղծել դատարան մուտք գործելու արգելված իրերի ցանկ, որը միշտ հասանելի լինի բոլոր այն անձանց համար, ովքեր ցանկանում են մասնակցել թե «Մասնա ծռերի», թե այլ գործերով դատավարություններին:

53 «ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը դատավորների և փաստաբանների անկախության մասին», զեկույց դատավորների և փաստաբանների անկախության մասին, ներկայացված Գլխավոր ասամբլեային 2009թ. հուլիսի 28-ին, թիվ A/64/181, տես www.un.org/ga/search/view_doc.asp?symbol=A/64/181

Արդար դատավարության իրավունք



Փաստաբան Հայկ Ալունյանը երևանյան գրասենյակում

Հայաստան կատարած այցի ընթացքում փաստահավաք առաքելության անդամները տեղեկություններ են հավաքել նաև այլ խոչընդոտների մասին, որոնք հանդիպել են “Մասնա ծոերի” և հանրային մեծ հնչեղություն ունեցող այլ գործերում ներգրավված փաստաբաններն իրենց աշխատանքում: Սա վերաբերում է փաստաբանների՝ իրենց վստահորդների և գործի նյութերի մատչելիությանը, և մասնավորապես դատավարությանն ակտիվ մասնակցություն ունենալու իրենց հնարավորությանը: Փաստաբանների այս իրավունքներն իրենց վստահորդների արդար դատավարության իրավունքի ածանցյալն են: Փաստաբանի՝ իր վստահորդի մատչելիության անհրաժեշտությունը շաղկապված է վստահորդի՝ իր իրավունքն անձամբ կամ փաստաբանի միջոցով պաշտպանելու հետ, փաստաբանների՝ գործի նյութերի մատչելիությունը քրեական վարույթում վստահորդի տեղեկատվության իրավունքի անբաժան մասն է կազմում, և այլն:

ՎՍՏԱՀՈՐԴՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: ՓՍՏԱԲԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԷԸ

Իր հայտարարության մեջ Քաղաքացիական համերաշխության հարթակը գրել է.

“Մեզ տրամադրած տեղեկության համաձայն, “Մասնա ծոերի” և նմանատիպ հնչեղություն ունեցող այլ գործերում ներգրավված այս և այլ փաստաբանների խոչընդոտել են տեսակցել կալանավայրերում գտնվող իրենց վստահորդներին և մերժել են նրանց հետ առանձին քննարկումներ անցկացնելու հնարավորություն տալ: Այլ դեպքերում, ՔԿՀ աշխատակիցներն առգրավել կամ ոչնչացրել են փաստաբան-վստահորդ հանդիպումների ժամանակ կատարած գրառումները՝ մեղադրյալներին հանդիպումներից հետո խուզարկելով: Այսպիսով, փաստաբանները խոչընդոտվել են իրենց վստահորդների պաշտպանությանը նախապատրաստվելու իրենց ջանքերում”:⁵⁴

54 Քաղաքացիական համերաշխության հարթակ. “Հայաստան. հետապնդումներ աղմկահարույց գործերով զբաղվող փաստաբանների նկատմամբ” հայտարարություն, տես՝ www.civicsolidarity.org/article/1490/armenia-harassment-lawyers-working-high-profile-cases

Փաստաբանների հետ հարցազրույցները հաստատեցին, որ իրենցից ոմանք դժվարություններ են ունեցել ազատ մուտք գործել իրենց վստահորդների մոտ: Որոշ փաստաբաններ հաղորդել են, որ խորհրդատվություններից հետո իրենց վստահորդները ենթարկվել են լրացուցիչ խուզարկության, կամ փորձեր են եղել միջամտելու մեղադրյալների և փաստաբանների համատեղ պատրաստած փաստաբան-վստահորդ արտոնությանն առնչվող գործի նյութերին:

Հարցված փաստաբանների կողմից հաճախակի է նշվել, որ իրենց թույլատրվել է հանդիպել իրենց վստահորդներին, սակայն զգալի ուշացումով:⁵⁵ Երբեմն այդ սպասման ժամանակը կազմել է մի քանի ժամ:⁵⁶ Մի փաստաբան կասկած է հայտնել, որ երկար սպասման ժամանակը կապված է եղել այն փաստի հետ, որ “Մասնա ծոերի” գործերով իրենց վստահորդները նախքան իրենց փաստաբանների հետ հանդիպումն ավելի մանրամասն, նվաստացուցիչ խուզարկության են ենթարկվել (“Մասնա ծոերի” գործերով մեղադրյալների նկատմամբ վերաբերմունքի մասին տեղեկատվությունը տես “Այլ մտահոգող հարցեր” բաժնում), ինչպես նաև նրանց նկատմամբ լրացուցիչ սահմանափակումներ են կիրառվել այս հաստատությունում թույլատրված իրեր ունենալու առնչությամբ:⁵⁷

“ Ժամանակ է եղել, երբ 30 մարդ է ձերբակալվել, սակայն ՄԻԶՈ-ը [ձերբակալվածների պահման վայրը] նախատեսված է 12 անձի համար: Կային օրեր, որ մենք ստիպված էինք երկար սպասել հանդիպման համար, քանի որ վայրը մարդաշատ էր և տեղ չկար: Դատախազությունն էլ էր ստիպված սպասում (Լիպարիտ Սիմոնյան, փաստաբան)

Փաստաբան Լուսինե Սահակյանը նշել է, որ ինքը չի կարողացել տեսակցել իր վստահորդներից մեկին “Երևան-Կենտրոն” ՔԿԶ-ում, որը չորս ամիս շարունակ վերահսկվել է ԱԱԾ-ի կողմից: Դա պայմանավորված է եղել նրանով, որ բանտի տնօրենը տիկին Սահակյանից պահանջել է ձեռքի պայուսակը թողնել ընդունարանում կամ բացել այն զննության համար: Գործընթացը պաշտոնապես անվանվել է զննություն, սակայն փաստաբանի կարծիքով, այն խուզարկություն է ներկայացրել: Տիկին Սահակյանը նշել է, որ խուզարկությունները սկսվել են դատավարությունների ժամանակ: Նա նշել է նաև, որ իր 20 տարվա աշխատանքային փորձի ընթացքում նախկինում որևէ դժվարության չի հանդիպել մուտք ունենալու տվյալ հաստատություն: Մինչ այս դատական վարույթները նա կարողացել է տեսակցել նույն վստահորդին առանց այդպիսի ընթացակարգի ենթարկվելու: Սակայն մեղադրյալի հետ շփումը հիմա հիմնականում իրականանում է միայն դատարանի դահլիճում:

Փաստաբան Տիգրան Հայրապետյանը տեղեկացրել է, որ այն ՄԻԶՈ-ի աշխատակիցները, որտեղ իր վստահորդն է պահվում, շարունակում են ընթերցել վստահորդի գաղտնի նյութերը: Փաստաբան Արայիկ Պապիկյանը նկարագրել է իրավիճակ, երբ իր վստահորդի հետ հանդիպում է ունեցել բանտում, որը տևել է մոտ երկու ժամ: Հանդիպման ընթացքում նրանք միասին նախապատրաստել են նյութեր, որոնք Արայիկ Պապիկյանը թողել է վստահորդի մոտ: Բանտի ծառայակիցները զննել են կալանավորին Արայիկ

55 Հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 4 սեպտեմբերի, 2017թ., հարցազրույց փաստաբան Արա Զաքարյանի հետ, 4 սեպտեմբերի, 2017թ., հարցազրույց փաստաբան Հայկ Ալումյանի հետ, 4 սեպտեմբերի, 2017թ.: Այնուհանդերձ, հարցազրուցավարը տեսնում էր երկար սպասման ժամանակի երկարատևությունը դիտարկել է որպես ընդհանուր խնդիր: .

56 Հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 4 սեպտեմբերի, 2017թ., հարցազրույց փաստաբան Լուսինե Հակոբյանի հետ, 5 սեպտեմբերի, 2017թ.:

57 Հարցազրույց փաստաբան Արա Զաքարյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

Պապիկյանի ներկայությամբ, սակայն նրա դուրս գալուց հետո նրանք խուզարկել են վստահորդին՝ նյութերը գտնելու նպատակով: Վերջինս պատռել է թերթիկը՝ փորձելով կանխել դրանք իրենից առգրավելու փորձը: Պարոն Պապիկյանը պնդել է, որ բանտի ծառայողները նյութերում քաղաքական բովանդակություն են փնտրել: Արայիկ Պապիկյանի վստահորդներից մեկ ուրիշը՝ Գևորգ Իրիցյանը, տարեց մարդ է և ունի հիշողության խնդիրներ: Ոստիկանները նրանից առգրավել են դատի համար նախապատրաստած նյութերը: Արայիկ Պապիկյանն այս երկու միջադեպերի մասին տեղեկացրել է դատախազին, սակայն պաշտոնական պատասխան չի ստացել:

ԳՈՐԾԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ: ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ի տարբերություն արդար դատաքննության իրավունքին առնչվող մեր դիտարկած այլ տարրերի, առաքելության անդամները չեն նշել գործի նյութերի մատչելիության հետ կապված շատ խնդիրներ:

Որոշ փաստաբաններ նշել են որոշակի փաստաթղթերի, մասնավորապես իրենց հաճախորդների բժշկական քարտերի, մատչելիությանն առնչվող հազվադեպ խնդիրներ:⁵⁸ Փաստաբաններից մեկը նկատել է, որ այլ գործերով սպասման ժամկետն այնքան երկար չէ, որքան այն “Սասնա ծռեր” խմբի գործերի դեպքում: Թեև հայաստանյան օրենքով սահմանված չէ պաշտոնական փաստաթղթերի կրկնօրինակներն անմիջապես տրամադրելու պարտավորություն, գործնականում սովորաբար այն երկար չի տևում:⁵⁹

Հարցված այլ փաստաբանների կողմից ներկայացված որոշ խնդիրներ, կարծես, ավելի համակարգային բնույթ են կրում: Օրինակ, գործի նյութերի կրկնօրինակներն ստանալու համար վճարելու անհրաժեշտությունը: Որոշ փաստաբաններ նշել են, որ նման վճարումների վերաբերյալ իրավական հստակություն չկա:⁶⁰

Նախաքննության ընթացքում գործի նյութերի մատչելիությունը մեկ այլ համակարգային խնդիր է: Հայաստանի օրենսդրության համաձայն նախաքննության ընթացքում գործի նյութերը մատչելի դարձնելու մասին որոշումը կախված է դատախազից:⁶¹

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ: “ԶԵՆՔԵՐԻ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ”

Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոնի զեկույցը մանրամասնորեն անդրադառնում է այս հարցին:⁶²

Առաքելության ընթացքում պատվիրակները հարցրել են “Սասնա ծռերի” գործերով ներգրավված փաստաբաններին, արդյո՞ք նրանք կարողացել են ակտիվորեն ներկայացնել իրենց վստահորդներին

58 Հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Լուսինե Հակոբյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5, հարցազրույց փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

59 Հարցազրույց փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

60 Հարցազրույց փաստաբան Արա Զաքարյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Հայկ Ալումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

61 Հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5, հարցազրույց փաստաբան Կարեն Մեջլումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 6:

62 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոն, “Տեղեկագիր 2016թ. հուլիսի 19-ին “Սասնա ծռեր” խմբի կողմից Երևանում ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքի գրավման առնչությամբ հարուցված քրեական գործերի դատավարությունների արդյունքների մասին”:

դատարանում: Հարցն ուղղված էր մեղադրյալների՝ օրենքի առաջ հավասարության և նրանց՝ իրավասու, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից դատվելու, արդար դատաքննության, ինքն իրեն պաշտպանելու և դատական նիստին ներկա լինելու և այլ իրավունքներին: Առաքելության պատվիրակները նշել են, որ քանի որ «Մասնա ծռերի» լուսնները դեռևս նախնական փուլերում են, մինչ օրս ընդմիջումներն ավելի երկար են տևել, քան ընթացիկ ընթացակարգային գործողությունները: Իրավական վերլուծության և զարգացման կենտրոնի զեկույցն անդրադառնում է այս հարցին:

Հարցված փաստաբանները, լրագրողները և դատաքննությունների դիտորդում իրականացրած ՀԿ ներկայացուցիչները նշել են, որ փաստաբաններին թույլ չի տրվել բանավոր միջնորդություններ, փաստացի առարկություններ և հայտարարություններ ներկայացնել դատարանին:⁶³ Հարցազրույցի մասնակից որոշ փաստաբաններ ասել են, որ իրենք կարողացել են միայն գրավոր միջնորդություններ ներկայացնել:⁶⁴ Դատախազներին, սակայն, թույլ է տրվել խոսել դատական նիստին,⁶⁵ թեև ենթադրաբար, նրանք շատ չեն օգտվել այս հնարավորությունից:⁶⁶ Սա թերևս «Մասնա ծռերի» դատական վարույթում արդար դատաքննության իրավունքի ապահովման հետ կապված ամենալուրջ խնդիրն է: Իրավիճակն անօգնականության զգացում է առաջացրել որոշ փաստաբանների շրջանում՝ առաջ բերելով այն զգացողությունը, որ պաշտպանությունը կարծես պարզապես բեմականացված ներկայացում է:

“ Մենք տեսնում ենք, որ դատավորներն անտեսում կամ մերժում են բոլոր պաշտպանական միջնորդությունները, որը չի համապատասխանում արդար դատավարության սկզբունքներին: Ոչ մի նորմ չի պահպանվում, ուստի դժվար է նույնիսկ համեմատել”:
(Հայկուհի Հարությունյան, “Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների” ՀԿ ներկայացուցիչ)

“ Երբ ես միջնորդություն եմ ներկայացնում, պատասխան չեմ ստանում: Դրանք անտեսվում են: Ես չեմ կարողանում առարկություն ներկայացնել: Այսպիսով, ես չեմ կարողանում օգտագործել այն գործիքներից որևէ մեկը, որոնք ես՝ որպես փաստաբան, ունեմ իմ ձեռքի տակ: Դա ինձ դարձնում է կեղծ փաստաբան: Ես չեմ կարողանում իրականացնել պաշտպանի դերը, նույնիսկ այն ժամանակ, երբ ինձ թույլատրվում է ներս մտնել դահլիճ: Այլ կառույցներին ուղղված իմ բողոք-դիմումները նույնպես պատասխան չեն գտել”:
(Տիգրան Հայրապետյան, փաստաբան)

63 Հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Տիգրան Եզրոյանի և Դավիթ Գյուրջյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5: Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոն, նույն տեղում:

64 Հարցազրույց փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Արա Չաքարյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

65 Հարցազրույց փաստաբան Լուսինե Սահակյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

66 Հարցազրույց հայ լրագրողների հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

Փաստաբանները և լրագրողները հաղորդել են, որ փաստաբանների կողմից դատավարության կոնկրետ պահի միջամտելու իրավունքը մերժելու կիրառվող փաստարկներից մեկը այն էր, որ միջնորդություններն ու հայտարարությունները ներկայացնելու պատեհ ժամանակը չէ:⁶⁷ Որոշ փաստաբաններ լրացուցիչ նշել են, որ եղել են իրավիճակներ, երբ փաստաբանին խոսելու համար համապատասխան ժամանակ չի տրամադրվել:

“ Դատական լուսններին ինձ թույլ չի տրվում խոսել: Ես ուզում եմ ասել, որ երբ ես ցանկանում եմ խոսել, դատավորը զգուշացնում է ինձ, որ իմ նկատմամբ պատժամիջոց կկիրառվի: Ես արդեն խոսելու համար ենթարկվել եմ պատժամիջոցի: Երբ ցանկանում էի հայտարարություն անել, իմ նկատմամբ պատժամիջոց կիրառվեց”:
(Հայարիփի Սարգսյան, փաստաբան)

Հայաստանի օրենսդրության համաձայն, դատավարության ընթացքում միջնորդություններ ներկայացնելու կոնկրետ ժամանակ չկա: Քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածը նշում է, որ միջնորդությունները և պահանջները պետք է քննության առնվեն և լուծվեն դրանք հայտարարելուց անմիջապես հետո, եթե սույն օրենսգրքի դրույթներով այլ կարգ սահմանված չէ: Սույն օրենսգրքը նաև նշում է, որ միջնորդության լուծումը կարող է ժամանակ առ ժամանակ հետաձգվել:

Փաստաբանները նաև տեղեկացրել են, որ դատավորները հավասար վերաբերմունք չեն ցուցաբերում միջնորդությունների ներկայացման վերաբերյալ: Օրինակ, փաստաբաններից մեկը մտաբերեց, որ իր վստահորդի հետ հանդիպման սահմանափակումները վերացնելու իր միջնորդությունները չեն ընդունվել այն պատճառով, որ ոչ բոլոր կողմերն են ներկա գտնվել, և միննույն ժամանակ դատավորին ինքնաբացարկի միջնորդությունը հաշվի է առնվել (թեև, ի վերջո, մերժվել է):⁶⁸ Բացի դրանից, փաստաբանները նաև նշել են, որ դատավորները դատական լուսներ են անցկացնում նույնիսկ փաստաբանների կամ մեղադրյալների բացակայության պայմաններում:

“ Դատական նիստերը տեղի են ունենում առանց փաստաբանների և ամբաստանյալների: Թվում է, կարծես դատավորները ցանկանում են հնարավորինս շուտ ավարտել գործը”:
(Արա Զաքարյան, փաստաբան)

Որոշ փաստաբաններ հաղորդել են, որ նրանք այլ պատճառներով նույնպես դժվարություններ են ունեցել դատավարություններում: Մի դեպքում իշխանությունները փաստաբանին ժամանակին չեն տեղեկացրել դատական նիստի մասին, մեկ այլ անգամ, դա տեղի է ունեցել այլ դատական լուսների համընկնող օրերի և ժամերի պատճառով: Փաստաբան Տիգրան Եգորյանը նկատել է, որ բոլորը տեղյակ են այն օրերի մասին, երբ “Սասնա ծռերի” դատավարություններն են տեղի ունենում, և սակայն այլ դատական նիստեր

67 Հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Հայարիփի Սարգսյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, հարցազրույց հայ լրագրողների հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

68 Հարցազրույց փաստաբան Դավիթ Գյուրջյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

են նշանակվում, որոնք համընկնում են այս դատական նիստերի հետ: Պարոն Եգորյանը ենթադրություն է հայտնել, որ իշխանությունները դիտմամբ են այլ լուսններ նշանակում նույն օրերին, որպեսզի սրանով կանխեն փաստաբանների մասնակցությունը “Մասնա ծռերի” լուսններին: Ակնհայտ է, որ դա հաստատվել է նաև այլ փաստաբանների հետ առանձնագրույցներում:

“ Ես դատական նիստի մասին իմացա միայն, երբ վերադարձա մեկ այլ դատավարությունից և հայտնաբերեցի համացանցում: Ես խնդրեցի դատարանին փոխել օրը, բայց նրանք չարձագանքեցին, և այդ նիստերը տեղի են ունենում, ինչպես և որոշված է”:
(Լիպարիտ Միմոնյան, փաստաբան)

ՕՐԵՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՁԱՏՈՒՄ

Առաքելության ընթացքում հարցազրույցների մասնակից մարդիկ հայտնել են “Մասնա ծռերի” գործերի վարույթներին առնչվող բազմաթիվ այլ խնդիրների մասին: Այնուամենայնիվ, հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ արմատական պատճառները ընկած են օրենքի գերակայության ընդհանուր ճգնաժամի և իշխանությունների հստակ տարանջատման բացակայության հիմքում:⁶⁹ Դատական իշխանության և “Մասնա ծռերի” գործերով զբաղվող դատավորների հանդեպ վստահության բացակայությունն ընդհանուր կարծիք է գրեթե բոլոր զրույցներում:

“ Մենք ունենք լավ օրենքներ և անկատար օրենքներ: Բայց կարևոր չէ, թե մենք ընդունում ենք լավ կամ վատ օրենքներ, քանի որ լավ օրենքները միննույն է չեն կիրառվում: “Մասնա ծռերի” և Սեֆիլյանի գործերում մեր դատական համակարգի որակը և մակարդակը արժեզրկվել են”: (Տիգրան Հայրապետյան, փաստաբան)

Ներկայացված զեկույցը նպատակ չունի ներկայացնել օրենքի գերակայության, իշխանությունների տարանջատման և Հայաստանում դատական անկախության հետ կապված խնդիրների մանրամասն վերլուծություն:⁷⁰ Սակայն կարևոր է նշել այս խնդիրները՝ որպես համընդհանուր համատեքստը կազմող մաս, որում իրականացվել դիտորդական առաքելությունը:

69 Ֆրիդլըմ հաուս, “Ազատությունն աշխարհում 2016. Հայաստան”, տես՝ <https://freedomhouse.org/report/freedom-world/2016/armenia>;

70 Տես, օրինակ, դատական համակարգին առնչվող մտահոգությունները, որոնք ներկայացված են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսի՝ 2014թ. հոկտեմբերի 5-9-ը Հայաստան կատարած այցի մասին զեկույցում, տես www.business-anti-corruption.com/country-profiles/armenia: “Կոռուպցիան Հայաստանում” զեկույց, տես՝ www.business-anti-corruption.com/country-profiles/armenia:

Մարդու իրավունքների միջազգային չափանիշները նախատեսում են, որ յուրաքանչյուր ոք ունի արդար դատաքննության իրավունք: Այս իրավունքի “բաղադրիչները” հակիրճ ամփոփված են վերևում (տե՛ս “Մուտք դատարաններ” բաժինը): Կարևոր է, որ այս և մյուս մարդու իրավունքների ու ազատությունների իրացումը զերծ լինի խտրականությունից, քանի որ բոլորը հավասար են օրենքի և դատարանների առաջ: Արդար դատաքննության առումով հավասարության երաշխիքն ունի տարբեր առանցքային տարրեր, ինչպիսիք են խտրական օրենքների արգելումը, հավասար պայմաններում դատարանի մատչելիության իրավունքը և դատարանների կողմից հավասար վերաբերմունքի ապահովումը:⁷¹ Օրենքի առջև հավասարությունը նշանակում է, մի կողմից, որ այդ օրենքները խտրական չեն լինելու, և մյուս կողմից, որ դատավորները չեն դրսևորի խտրական վերաբերմունք դրանք կիրառելիս: Վերաբերմունքի հավասարությունը դատարանում նախատեսում է, որ քրեական վարույթի երկու կողմերին՝ դատախազությանը և պաշտպանությանը, հավասար հնարավորություններ են տրվում պատրաստելու և ներկայացնելու իրենց գործը, ինչպես նաև նմանատիպ իրավիճակներում մեղադրյալների նկատմամբ դրսևորվում է հավասար վերաբերմունք: Սա նշանակում է, որ “քրեական հանցագործության մեջ մեղադրվող անձին [...] պետք է տրամադրվի նույն երաշխիքները, անկախ նրանից՝ հանցանքը տեղի է ունեցել “քաղաքական” թե “սովորական քրեական” համատեքստում”:⁷²

Համընդհանուր հռչակագիր

Հոդված 2

“Յուրաքանչյուր ոք ունի սույն Հռչակագրում ամրագրված բոլոր իրավունքներն ու ազատությունները՝ առանց որևէ տարբերակման այնպիսի հիմքերով, ինչպիսիք են ռասան, մաշկի գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակ”:^[...]

Հոդված 10

“Յուրաքանչյուր ոք, իր իրավունքների և պարտականությունների սահմանման և իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի դեպքում, ունի լիակատար հավասարության պայմաններում անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք”:

ՔՔԻՄ դաշնագրի հոդված 14 (1)

“1. Բոլոր անձինք հավասար են դատարանների և տրիբունալների առջև: Յուրաքանչյուր ոք իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանք քննելու կամ որևէ քաղաքացիական դատավարությունում իր իրավունքներն ու պարտականությունները որոշելու ընթացքում ունի օրենքի հիման վրա ստեղծված իրավասու, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից գործի արդարացի ու հրապարակավ քննության իրավունք”:^[...]

71 Ամսիսի ինթերնեշլ, “Արդար դատաքննության ձեռնարկ”, 1998թ. դեկտեմբեր, էջ 71:

72 Նույն տեղում, էջ 73:

Հարցազրույցների ընթացքում առաքելության կողմից հավաքված տեղեկությունները ենթադրում են, որ “Մասնա ծռերի” փաստաբանները դժվարությունների են հանդիպում իրենց վստահորդների գործերը նախապատրաստելու և հատկապես դատարանում ներկայացնելու հարցում: Նրանք տեղեկացնում են, որ դատավորների վարքագիծը դատական լուսններին տարբերվում է այլ դատավարություններում նրանց վարքագծից (տես նաև “Կարգապահական վարույթի կիրառումը” բաժինը): Այսպիսով, արդարացիորեն կարելի է ասել, որ մեղադրյալների արդար դատավարության իրավունքը կարող է խախտվել: Այդ իսկ պատճառով առաքելությունը խորհուրդ է տալիս Հայաստանի իշխանություններին.

- ◇ ապահովել արդար դատավարության իրավունքի հավասար իրացումը ներկայումս ընթացող “Մասնա ծռերի” գործերում,
- ◇ ապահովել, որ “Մասնա ծռերի” գործերում մեղադրյալներին ներկայացնող փաստաբանները չեն խոչընդոտվում իրենց մասնագիտական պարտականությունների կատարման, մասնավորապես, դատարանում վստահորդներին օգնություն ցուցաբերելու առումով, և որ նրանք կարող են կատարել բանավոր միջնորդություններ և հայտարարություններ դատավարության ընթացքում

Կարգապահական վարույթի կիրառումը



Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյան

Իր հայտարարության մեջ Քաղաքացիական համերաշխության հարթակը նշել է.

“Դատական նիստերի դահլիճից փաստաբանների բացակայությունը կրկին հանգեցրել է դատարանի կողմից Փաստաբանների պալատին ուղղված կարգադրությունների, որոնցով դատարանը պահանջում է կարգապահական միջոցառումներ ձեռնարկել փաստաբանների նկատմամբ: Այսպիսի դատական կարգադրություններ տրվել են նաև այն ժամանակ, երբ

փաստաբանները հրաժարվել են շարունակել մասնակցել լսումներին, երբ իրենց վստահորդները ժամանակավորապես հեռացվել են դատական նիստերի դահլիճից դատարանի կանոնակարգի ենթադրյալ խախտումների համար”:

“Դատավորն ասաց ինձ, որ Փաստաբանների պալատին տեղեկացնելու է դատարանի դահլիճից իմ բացակայության մասին: Ես գիտեմ, որ չորսից հինգ կարգապահական վարույթ կա իմ վերաբերյալ”:
(Արա Զաքարյան, փաստաբան)

ԴԱՏԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՆԱԽԱՂԵՊ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Հայաստանում դատավորները կարող են “պատժամիջոցներ կիրառել”⁷³ փաստաբանների նկատմամբ սխալ վարքագիծ դրսևորելու համար: Այս պատժամիջոցները ինքնաբերաբար չեն հանգեցնում պատժի: Դատարանի՝ Փաստաբանների պալատին (“ՓՊ”) ուղղված որոշումը պարտադիր հիմք է հանդիսանում ՓԲ նախագահի կողմից կարգապահական վարույթ հարուցելու համար: Հետևաբար, երբ դատարանը պատժի է ենթարկում փաստաբանին, ՓԲ նախագահը պարտավոր է վարույթ հարուցել՝ օրենքով սահմանված կարգով: Քրեական դատավարության օրենսգրքի համաձայն, պատիժը կիրառելու մասին դատարանի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից: Դատական տուգանքի կիրառման վերաբերյալ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների որոշումները կարող են բողոքարկվել եռօրյա ժամկետում: “Մասնա ծոերի” դատավարությունները հստակ բնութագրվում են այս մեխանիզմի աճող և աննախադեպ կիրառմամբ: Դատական պատժամիջոցների քանակի ավելացումը հանգեցնում է կարգապահական վարույթի աճին (տես “Փաստաբանների պալատի կարգապահական վարույթները” բաժինը): Այնուամենայնիվ, փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի հետ կապված իրավիճակն աստիճանաբար զարգացել է դեռևս “Մասնա ծոերի” գործերից առաջ:⁷⁴

Տեղեկատվության համաձայն՝ պատժամիջոցների կիրառման պրակտիկան տարբերվում էր այն դատարանների միջև, որտեղ “Մասնա ծոերի” և Ժիրայր Սեֆիլյանի գործերի լսումներն էին ընթանում: Հաղորդվել է, որ Սեֆիլյանի դատավարության ընթացքում դատավորը պատժամիջոցներ չի կիրառել, մինչդեռ, ինչպես տեղեկացրել են հարցվողները, “Մասնա ծոերի” գործերով դատավոր Գաբրիելյանը պատժամիջոցներ է կիրառել յուրաքանչյուր դատալսման ժամանակ: Առաքելության պատվիրակները հնարավորություն չեն ունեցել հաստատել այս տեղեկությունները, քանի որ Սեֆիլյանի գործով դատավորը հրաժարվել է խոսել առաքելության պատվիրակների հետ, ովքեր դիտորդում են իրականացրել Երևանի Շենգավիթի վարչական շրջանի առաջին ատյանի դատարանում 2017թ. սեպտեմբերի 8-ին: Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում 2017թ. սեպտեմբերի 6-ին “Մասնա ծոերի” գործերի դատական դիտորդման ժամանակ առաքելության անդամները նշել են, որ դատավորը հայտարարել է ընդմիջում դատարանից բացակայող դատապաշտպանների նկատմամբ պատժամիջոցների վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

Հարցման ենթակա մի շարք փաստաբանների նկատմամբ, որոնց թվում էին Արայիկ Պապիկյանը, Տիգրան Հայրապետյանը, Արա Զաքարյանը, Ինեսսա Պետրոսյանը, Հայարփի Մարգարյանը և Լուսինե Սահակյանը,

73 Հարցված փաստաբաններն այսպես են նկարագրել գործընթացը: Փաստորեն, սա նշանակում է, որ Փաստաբանների պալատին կարգապահական վարույթի հարուցումը պահանջվում է դատարանի կողմից:

74 Հարցազրույց փաստաբան Արամազդ Գիվիրյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

դատարանի պահանջով արդեն իսկ հարուցվել էին կարգապահական վարույթներ: Արայիկ Պապիկյանը տեղեկացրել է, որ ՓՊ-ից ստացել է 14 ծանուցումներ, համաձայն որոնց իր վերաբերյալ կարգապահական քննություններ են ընթանում:

ԴԱՏԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

“ Վստահորդի առջև նվաստացման տարր կա: Վստահորդը կարող է մտածել, որ դուք չեք կարող պաշտպանել ձեր սեփական իրավունքները, այդ դեպքում ինչպես կարող եք պաշտպանել իրենց իրավունքները: (Արամազդ Կիվիրյան, փաստաբան)

Շատ դեպքերում, “Մասնա ծոերի” գործերով փաստաբանների նկատմամբ կարգապահական միջոցներ կիրառելու պատճառը դատական նիստից նրանց բացակայությունն էր, քանի որ դատարանի շենք մուտք գործելիս նրանք հրաժարվել են անվտանգության նպատակով ստուգումների ենթարկվել: Մա հարցված որոշ փաստաբանների կողմից դիտարկվել է որպես համակարգային խնդիր, քանի որ մեղադրյալները չեն կարող ներկայացվել առանց իրենց փաստաբանների: Այս իրավիճակը երբեմն հանգեցրել է դատարանի կողմից հանրային պաշտպանի նշանակման, ով չի ընդունվել մեղադրյալի կողմից. խնդրահարույց հարց, որը նույնպես հետհարված է մեղադրյալների արդար դատաքննության իրավունքի նկատմամբ:

Մտահոգության մեկ այլ թեմա է մեղադրյալների նկատմամբ պատժամիջոցների կիրառումը, ինչը հանգեցնում է նրանց հեռացմանը դահլիճից: Երբ մեղադրյալը հեռացվում է դատական նիստերի դահլիճից և վերջինիս բացակայության դեպքում պաշտպանը չունի վստահորդի համաձայնությունը, նա նույնպես հեռանում է՝ արդյունքում ենթարկվելով պատժամիջոցի: Մա, օրինակ, իրականացվել է “Մասնա ծոեր” գործերով պաշտպաններ Հայկ Ալույանի, Տիգրան Հայրապետյանի և Լիպարիտ Միմոնյանի նկատմամբ: Ավելին, Հայկ Ալույանի վստահորդը հետաքննության ընթացքում ենթարկվել է անմարդկային վերաբերմունքի: Մարդը ֆիզիկապես ի վիճակի չի եղել կանգնել դատարանում: Դրա պատճառով նա հեռացվել է դատական նիստերի դահլիճից: Երբ դատավորն ընդմիջում է հայտարարել, փաստաբանը տասը րոպեով դուրս է եկել դատական նիստերի դահլիճից և այնտեղ չի եղել, երբ դատավորը վերադարձել է, այդպիսով դատավորը բողոք է ներկայացրել ՓԲ: Մեկ այլ դեպքում դատավորը Լիպարիտ Միմոնյանի վստահորդի նկատմամբ պատժամիջոց է կիրառել դատարանում չկանգնելու համար և կարգադրել նրան հեռացնել դատարանի դահլիճից: Լիպարիտ Միմոնյանը հայտարարել է, որ նրա բացակայության դեպքում ինքը չի պաշտպանի վերջինիս: Այլ դեպքերում, երբ փաստաբանները համառորեն փորձել են միջնորդություն ներկայացնել դատական նիստի ժամանակ, նրանց նկատմամբ պատժամիջոց է կիրառվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի համար:

Բացի դրանից, որոշ դեպքերում դատախազը կամ ոստիկանությունը նույնպես դիմել են պատժամիջոցներ կիրառելու համար:⁷⁵ Օրինակ, փաստաբան Արայիկ Պապիկյանը Ֆեյսբուքում տեսահոլովակ է տեղադրել, որում ցույց է տրվում, որ նա իր վստահորդ Արայիկ Խանդոյանի հայտարարությունից մեջբերում է անում, որում ասվում է՝ “ոստիկանությունը հանցագործների մի խումբ է”: Մա համարելով փաստաբանի վարքագծի կանոնների խախտում՝ դատախազությունը միջնորդություն է ներկայացվել ՓԲ, որը և նախաձեռնել է կարգապահական վարույթ Պապիկյանի նկատմամբ: Պետք է նշել, որ, ի տարբերություն դատական պատժամիջոցների, այս դեպքում ՓՊ-ը իրավաբանորեն պարտավորված չէր վարույթ հարուցել:

75 Հարցազրույց փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

Առաքելությունը նշել է, որ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի համաձայն «կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը» (հոդված 39.1, կետ 4): Վարքագծի կանոնագիրքը սահմանում է, որ «կանոնադրությունը խախտելու համար փաստաբանը կարող է ենթարկվել կարգապահական տույժի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և «Պալատի կանոնադրության» համաձայն (32.1 հոդված): Փաստաբանների պալատի 12-անդամանոց խորհուրդը պատասխանատվություն է կրում կարգապահական վարույթն իրականացնելու համար:

ՓԲ-ի կողմից նախաձեռնված կարգապահական վարույթների քանակի նկատելի աճ է գրանցվել «Մասնա ծոերի» դատավարությունն սկսելուց ի վեր: ՓԲ նախագահն ինքը հաստատեց, որ «Մասնա ծոերի» գործերով դատական պատժամիջոցների կիրառման քանակը շատ ավելի մեծ է, քան մյուս գործերում: Օրինակ՝ 2015 թվականին իրականացվել է 39 կարգապահական վարույթ, 2016-ին՝ 56, իսկ 2017 թվականի 9 ամիսների ընթացքում (հունվար-սեպտեմբեր)՝ 91 դեպք: 91 գործերից 65-ը նախաձեռնվել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու դատական որոշումների հիման վրա, 7-ը՝ փաստաբանների բողոքների արդյունքում, 9-ը՝ փաստաբանների վստահորդների և հակառակ կողմի բողոքների հիման վրա և 10-ը՝ այլ հիմքերով: Պալատի խորհրդի կողմից կարճվել է 29 կարգապահական վարույթ և 16-ի դեպքում կարգապահական տույժի որոշում է կայացվել: 5 գործ ավարտվել է նկատողությամբ, 4-ը՝ խիստ նկատողությամբ, 4-ը՝ տուգանքով, 3-ը՝ լրացուցիչ վերապատրաստման մասնակցելու որոշմամբ: 2017-ին նախաձեռնված 91 գործերից ոչ մեկով փաստաբանի արտոնագրի զրկման մասին որոշում չի կայացվել:⁷⁶

Ի հեճուկս այն հանգամանքի, որ առավել ծանր տույժը, այսինքն՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում դեռևս չի կիրառվել, հաճախակի կարգապահական վարույթների պրակտիկան փաստաբանների կողմից ընդունվում է որպես իրենց մասնագիտական գործունեության իրականացման իրավունքի խախտում: Նրանք կարգապահական վարույթը տեսնում են որպես միջոց իրենց՝ որպես «Մասնա ծոերի» պաշտպաններ, հուսահատեցնելու ռազմավարության մաս:⁷⁷ Որոշ ՀԿ ներկայացուցիչներ հաստատում են, որ պաշտպանյալների կողմից ընտրված փաստաբաններին հեռացնելը և պետության կողմից նշանակված պաշտպաններով փոխարինելը (հանրային պաշտպաններ), որոնց անկախությունը վիճարկելի է, հաճախ է կիրառվում իշխանությունների կողմից:

“ Հանրային պաշտպանների հետ կապված մեծ խնդիր կա: Նրանք ներգրավվում են դատավորի կողմից, իսկ պաշտպանյալները հրաժարվում են նրանց կողմից ներկայացվելուց: Որոշ դեպքերում մենք արդեն ներգրավված ենք որպես փաստաբաններ, սակայն դատավորը, այնուամենայնիվ, նշանակում է հանրային պաշտպան”:
(Տիգրան Եգորյան, փաստաբան)

Հարցված փաստաբաններից մեկը կարծիք է հայտնել, որ իր մասնագիտական գործունեությունը վտանգվում է ՓԲ-ի անկախության բացակայության հետևանքով: «Խորհուրդն անում է այն, ինչ ղեկավարն

76 Փաստաբանների պալատից ստացված վիճակագրության համաձայն:
77 Հարցագրույց փաստաբան Արամազ Գիվիրյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5, հարցազրույց ՀԿ ներկայացուցիչների հետ, 2017թ. սեպտեմբերի 7:

է ասում իրենց անել”,- հավելել է նա: Մի քանի փաստաբաններ սա որակել են որպես աննախադեպ և մտահոգիչ զարգացում, քանի որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի հաճախակի կիրառումը սկսվել է միայն “Մասնա ծոերի” դատավարություններով: Նրանք նաև մտահոգված էին այն հանգամանքով, որ երբ դատարանը պատժամիջոցներ է պարտադրում, ՓԲ-ը իրավաբանորեն պարտավոր է կարգապահական վարույթ հարուցել:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փաստաբանները, իհարկե, կարող են ենթարկվել կարգապահական պատասխանատվության: Մակայն մարդու իրավունքների միջազգային չափանիշները ենթադրում են, որ նրանք չպետք է պատժամիջոցների ենթարկվեն ընդունված մասնագիտական պարտականություններին, չափանիշներին և էթիկային համապատասխան գործողությունների համար: Փաստաբանների դերի հիմնարար սկզբունքների համաձայն՝ կառավարություններն ապահովում են, որպեսզի փաստաբանները “կարողանան իրենց մասնագիտական բոլոր պարտականությունները կատարել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մշտնջրտում”:⁷⁸

“Փաստաբանների դեմ հարուցված կարգապահական վարույթը ներկայացվում է իրավաբանների կողմից հիմնված անաչառ կարգապահական հանձնաժողովի կողմից, օրենքով նախատեսված անկախ մարմնում կամ դատարանում, և ենթակա է անկախ վերահսկողության”:⁷⁹ Եվրախորհրդի համաձայն՝ փաստաբանները չպետք է կրեն կամ ենթարկվեն սպառնալիքի ցանկացած պատժամիջոցով կամ ճնշմամբ, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան:⁷⁹ Կարգապահական վարույթը պետք է իրականացվի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում ամրագրված սկզբունքների և կանոնների, ինչպես նաև փաստաբանի իրավունքի՝ կարգապահական վարույթին մասնակցելու և որոշման դատական վերահսկողության համար դիմումի նկատմամբ լիարժեք հարգանքի պահպանմամբ:

“ՄԱԿ-ի սկզբունքները և քրեական արդարադատության համակարգում իրավական աջակցություն ստանալու ուղեցույց”, սկզբունք 12

“Կառավարությունները պետք է ապահովեն, որ իրավաբանական աջակցություն տրամադրողները կարողանան կատարել իրենց բոլոր մասնագիտական գործառնություններն առանց վախի, խոչընդոտի, հետապնդման կամ ոչ պատշաճ միջամտության, ազատ մուտք ունենան մեղադրող կողմի տրամադրության տակ կամ վերահսկողության ներքո գտնվող և այլ համապատասխան փաստաթղթերին, կարողանան ուղևորություններ կատարել և իրենց հաճախորդների հետ անարգել խորհրդակցել երկրի ներսում և նրա սահմաններից դուրս, դատական հետապնդման և դատական, վարչական, տնտեսական կամ այլ պատժամիջոցների չենթարկվեն՝ ընդունված մասնագիտական պարտականություններին, նորմերին ու բարոյականությանը համապատասխան ցանկացած գործողության համար, ինչպես նաև չենթարկվեն նման հետապնդման և պատժամիջոցների սպառնալիքների”:

78 Սկզբունք 16, “Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ”, ընդունված հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրեսի կողմից, Հավանա, Կուբա, 1990թ. օգոստոսի 27-սեպտեմբերի 7:

79 Եվրոպայի խորհուրդ, “Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին” հանձնարարական, 2000թ.

“ՄԱԿ-ի իրավաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքները”.
սկզբունք 27 և սկզբունք 28

“27. Իրենց մասնագիտական դերով հանդես եկող իրավաբանների հանդեպ մեղադրանքները կամ գանգատները ենթակա են շուտափույթ և օբյեկտիվ քննարկման՝ պատշաճ ընթացակարգին համապատասխան: Իրավաբաններն իրավունք ունեն գործի արդարացի քննության, ներառյալ իրենց ընտրությամբ իրավաբանի օգնության իրավունքը”:

“28. Իրավաբանների նկատմամբ կարգապահական միջոցները քննարկում են իրավաբանների կողմից ստեղծվող անաչառ կարգապահական կոմիտեի կողմից, օրենքով նախատեսված անկախ մարմնում կամ դատարանում, և ենթակա են անկախ վերահսկողության”:

Կարգապահական վարույթները դատարանի դահլիճ մուտք գործելու սահմանափակումների, ինչպես նաև դատական նիստից բացակայելու պատճառով ընդդեմ փաստաբանների առաջադրված դատական պատժամիջոցների դե ֆակտո հետևանք են: Առաքելության ընթացքում հավաքված տեղեկատվության համաձայն, փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի կիրառումն աննախադեպ է և սերտորեն կապված է “Մասնա ծոերի” դատական գործերի հետ: Թեև կարգապահական վարույթների մեծ մասը դեռևս չի ավարտվել և, հետևաբար, կարգապահական տույժեր չեն կիրառվել, փաստաբանները գտնվում են պատժի մշտական սպառնալիքի ներքո, ինչը կարող է նշանակել, որ նրանք կարող են զրկվել օրենքի կիրարկման իրավունքից: Սա կարող է զգալիորեն խոչընդոտել մեղադրյալների՝ իրավաբանական խորհրդատվության և արդար դատաքննության իրավունքներին: ՓՊ-ի կարգապահական պատժամիջոցների վերաբերյալ որոշումների անկախ վերանայման բացակայությունը մտահոգություն է առաջացնում միջազգային չափանիշներին Հայաստանի օրենսդրության համապատասխանության առումով: Այդ իսկ պատճառով առաքելությունը խորհուրդ է տալիս Հայաստանի իշխանություններին և ՓԲ-ին՝

- ♦ ապահովել, որ փաստաբանները, անկախ իրենց պաշտպանյալին վերագրվող քրեական մեղադրանքներից, կարող են իրականացնել իրենց մասնագիտական գործառնությունները՝ առանց վախի, խոչընդոտի, ոտնձգության կամ ոչ պատշաճ միջամտության,
- ♦ ապահովել կարգապահական վարույթի արդար չափանիշներ, որպեսզի փաստաբաններին հնարավորություն ընձեռվի բողոքարկելու դատարանի որոշումները և իրենց նկատմամբ կիրառված պատժամիջոցների վերաբերյալ որոշումները անկախ դատական քննությամբ,
- ♦ ապահովել, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթներ կամ այլ պատժամիջոցներ չեն նախաձեռնվում և կիրառվում՝ դատական կարգադրիչների իրականացրած ոչ հստակ անվտանգության ընթացակարգերին չենթարկվելու պատճառով:
- ♦ ապահովել, որ կարգապահական վարույթը փաստաբանների նկատմամբ չի հարուցվել իրենց արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման պատճառով:

Փաստաբանների դեմ ուղղված թիրախավորված մոտեցումը դատական նիստերի դահլիճից դուրս

Բացի դատարանի շենք մուտք գործելու և դատական լուսնների ընթացքում սահմանափակումների, որոշ հարցված անձինք մտահոգված էին սպառնալիքներից և բռնություններից, որ ստացել են դատարանի շենքից դուրս: Հիմնական մտահոգությունները ներառում էին հեռախոսային գաղտնալուսնները, սոցիալական ցանցերով ստացվող սպառնալիքները և “նախազգուշացումներն” ինչպես մասնավոր անձանց, այնպես էլ պետական գործակալների կողմից:

Որոշ փաստաբաններ վստահ չէին իրենց հեռախոսային խոսակցությունների գաղտնիության ապահովման հարցում: Առնվազն չորս փաստաբաններ կասկածում էին, որ իրենց հեռախոսները գաղտնալսվում են: Նրանցից մեկը՝ Արայիկ Պապիկյանը, հիշել է մի իրավիճակ, երբ նա և մյուս գործընկերները ստացել են հեռախոսագանգեր իբր փմյանցից, երբ նստած են եղել միննույն սենյակում և որևէ մեկը մյուսին չի զանգահարել: Մեկ այլ փաստաբան հիշեց, որ երբ խոսակցության մեջ է մտել երրորդ կողմը, ձայնը փոխվել է և տարօրինակ ձայներ են լսվել:

Փաստաբան Արայիկ Պապիկյանը նույնպես իրեն և իր ընտանիքին ուղղված սպառնալիքներ է ստացել ֆեյսբուքում, որի առնչությամբ դիմել է իր մասնագիտական գործունեությանը միջամտելու համար քրեական վարույթ հարուցելու պահանջով: Նա ստացել է նաև “բարեկամական նախազգուշացումներ” այն մարդկանցից, ովքեր զգուշացրել են, որ “անցել է սահմանագիծը” և ինչ-որ “վատ բան կարող է պատահել” “Մասնա ծոերի” գործերում իր ներգրավվածության պատճառով:

Մեղադրյալ Ժիրայր Սեֆիլյանին ներկայացնող Արա Զաքարյանը հեռախոսագանգ է ստացել Ազգային անվտանգության ծառայությունից (ԱԱԾ) և հրավիրվել հանդիպման ԱԱԾ ներկայացուցիչի հետ: Հանդիպման ընթացքում նա զգուշացվել է, որ իր կամ իր ընտանիքի հետ կարող է ինչ-որ բան պատահել: Նա վստահ էր, որ սպառնալիքները կատարվել են քաղաքական գործերում իր պաշտպանական գործունեության կապակցությամբ՝ նպատակ ունենալով ստիպել նրան հրաժարվելու Սեֆիլյանի պաշտպանությունից:

“ 2016թ. հուլիսի 26-ից սկսած իմ նկատմամբ հետապնդում սկսվեցին: Ես առաջին փաստաբանն էի, որ ներգրավվել էի “Մասնա ծոերի” գործում: Ես նույնիսկ հասարակական վայրերում եմ սպառնալիքներ ստացել”:
(Հայարփի Սարգսյան, փաստաբան)

“Մասնա ծոերի” խմբի անդամներից մեկին պաշտպանող փաստաբան Հայարփի Սարգսյանը հաղորդել է, որ “Մասնա ծոերի” գործերում իր ներգրավվածության սկզբում փողոցում մի մարդուց սպառնալիք է ստացել: Մարդը հետապնդել է իրեն և մի պահի ասել, թե կսպանի իրեն: Նա նաև հիշեց, որ 2016թ. հոկտեմբերին Ֆեյսբուքում հաղորդագրություններ են հայտնվել, որոնցում ասվում էր, թե իբր ինքը կառավարության գործակալ է և “Մասնա ծոերի” դեմ է աշխատում: Այդ լուրերը հասել են Հայարփի Սարգսյանի մյուս վստահորդ Աշոտ Պետրոսյանին, ով հետագայում հրաժարվել է իր ծառայություններից: Ավելին, 2017թ. սկզբին ոստիկանության որոշ սպաներ փորձել են խուզարկել իր բնակարանն առանց որոշման: Նա ոստիկաններին թույլ չի տվել ներս մտնել՝ պատճառաբանելով, որ իր բնակարանը նաև իր գրասենյակն է, և որ իր բոլոր փաստաթղթերն այնտեղ են պահվում:

“ 2017 թ. հունիսի 28-ին ոստիկանությունը թույլ չտվեց, որ մարդիկ մուտք գործեն դատական նիստերի դահլիճ: Մի մարդ ձերբակալվեց, ես ասացի. “Ես նրա փաստաբանն եմ և կպաշտպանեմ նրան”: Նրանք հարցրեցին, թե ինչ իրավունքներ են խախտվել, և, բռնելով ձեռքս, թույլ չտվեցին, որ ես մոտենամ նրան”:
(Արա Զաքարյան, փաստաբան)

Բացի վերը նկարագրված միջադեպերից, 2017թ. հունիսի 28-ին ոստիկանությունն ուժ է կիրառել Երևանի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի շենքի բակում գտնվող փաստաբանների դեմ: Միմյանցից անկախ՝ փաստաբանները և լրագրողները հաստատել են, որ ոստիկանները հրմշտել են Լուսինե Սահակյանին, Ինեսսա Պետրոսյանին, Արայիկ Պապիկյանին, Մուշեղ Շուշանյանին և Արա Զաքարյանին՝ խոչընդոտելով նրանց միջամտությունը ոստիկանության մեքենայով տեղափոխվող երիտասարդին իրավաբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային չափանիշների, ներառյալ ՄԱԿ-ի փաստաբանների դերի հիմնարար սկզբունքների շրջանակներում, Հայաստանը պարտավոր է ապահովել, որ փաստաբանները կարողանան իրենց բոլոր մասնագիտական գործառույթներն իրականացնել սպառնալիքներից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ անարդարացի միջամտությունից զերծ մթնոլորտում: Այնտեղ, որտեղ փաստաբանները սպառնալիքի են ենթարկվում իրենց մասնագիտական գործունեության պատճառով, իշխանությունները պետք է ապահովեն, որ նրանք պատշաճ կերպով պաշտպանված լինեն: Փաստաբանները չեն կարող ենթարկվել որևէ ֆիզիկական բռնության, դաժան վերաբերմունքի կամ խոչընդոտվեն իրենց մասնագիտական գործունեության ընթացքում:

Առաքելությունը նշել է, որ դատարանի նիստերի դահլիճից դուրս սպառնալիքները, ինչպես նաև ֆիզիկական բռնություններն առանձին դեպքեր են, սակայն պարզ է, որ նման իրավիճակներն ընդունելի չեն: Եթե առկա է ոչ պատշաճ վերաբերմունք, իշխանությունները պարտավոր են փաստաբանների և նրանց հարազատների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի մասին հայտարարությունների վերաբերյալ արագ և անկողմնակալ քննություն իրականացնել և պատասխանատվության ենթարկել մեղավորներին:

Այլ մտահոգող հարցեր

Առաքելության նպատակն էր հատկապես այն խնդիրների ուսումնասիրությունը, որոնց փաստաբանները դիմագրավել են իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս, սակայն բացահայտվել են այլ լուրջ խնդիրներ ևս: Թեև դրանք չպետք է ավելի զարգացվեն այս զեկույցում, առաքելությունը ցանկանում է դրանք թվարկել այստեղ՝ հետագա հնարավոր հետազոտության համար:

Հարցազրույցներին բարձրացված խնդիրներից մեկը դատավարությունների ժամանակ մեղադրյալների նկատմամբ անմարդկային վերաբերմունքն էր: Մի շարք փաստաբաններ նշել են, որ “Մասնա ծոերի” գործերում ներգրավված իրենց վստահորդների նկատմամբ ուժ է կիրառվել:⁸⁰ Որոշ դեպքերում ուժ կիրառվել է ձերբակալության ժամանակ: Տեղեկատվության համաձայն, այլ դեպքերում մեղադրյալների նկատմամբ անմարդկային վերաբերմունք է դրսևորվել դատավարության ժամանակ՝ դատարանի շենքի ներքնահարկում, երբ պատժամիջոցի վերաբերյալ որոշում էր կայացվում, կամ, որոշ դեպքերում, դատական սենյակում՝ փաստաբանների աչքի առաջ: Արձանագրվել են նաև մեղադրյալների ծեծի դեպքեր կալանավայրերում: Բացի այդ, մեղադրյալներին արգելել են իրենց փաստաբաններից բացի տեսակցել որևէ այլ անձի:⁸¹

“ Եթե պաշտպանյալը ծեծի է ենթարկվում դատարանի դահլիճում, և դատավորը չի արձագանքում, նա խախտում է օրենքը: Իմ նկատմամբ ամենամեծ խախտումն այն է, որ իմ պաշտպանյալը ծեծի է ենթարկվում դատարանում “: (Հայկ Ալումյան, փաստաբան)

Բարձրացված մյուս խնդիրն առնչվում էր մեղադրյալների առողջական վիճակին, որոնցից ոմանք ծանր վիրավորում էին ստացել 2016թ. հուլիսին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ: Խնդիրների շարքում էին, մասնավորապես, մեղադրյալներին բժշկական ծառայություններ մատուցելը մերժելը կամ նրանց առողջական վիճակները հաշվի չառնելը դատավարության ժամանակ:⁸²

Փաստաբանները հաճախ են նշել վատ պայմանների մասին կալանավայրերում և փոխադրումների ժամանակ: Նրանցից մեկը նշել է, որ մեղադրյալները տեղափոխվել են մետաղական ֆուրգոններով: Ամռանը նրանք այդ ֆուրգոններում պահվել են խիստ տապին, ավելի երկար ժամանակ, քան պահանջվում է: Երբ մեղադրյալները դատարան են բերվել, հաճախ, տարբեր պատճառներով, արագ դուրս են բերվել դահլիճից, այդ թվում, ասենք, դատարանի նկատմամբ կարծեցյալ անհարգալից վերաբերմունք դրսևորելու համար: Այդ իսկ պատճառով մեղադրյալներից ոմանք հրաժարվել են տրանսպորտային վատ պայմաններով տեղափոխվելուց և փորձել են հրաժարվել գալ դատարան: Սակայն նրանք դատարան են բերվել ստիպողաբար:⁸³

80 Հարցազրույց փաստաբան Լուսինե Հակոբյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5, հարցազրույց փաստաբան Հայկ Ալումյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4, նաև նշվել է Ավետիք Իշխանյանի հետ հարցազրույցի ժամանակ, 2017թ. սեպտեմբերի 8:
81 Հարցազրույց փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Դավիթ Գյուրջյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 5:
82 Հարցազրույց փաստաբան Հայրապի Սարգսյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:
83 Հարցազրույց փաստաբան Տիգրան Հայրապետյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

Համաձայն տեղեկատվության՝ «Մասնա ծոերի» վարույթում անվտանգության նպատակով միջոցառումների ծավալի հարցը բազմիցս բարձրացվել է փաստաբանների և այլ հարցվողների կողմից, այդ թվում՝

- ◇ ապակե պատը, որը կողմերին բաժանում է լսարանից, որոշ հարցվածներ նշել են, որ պատը լսարանին խանգարել է լսել դատավարության մասնակիցներին,⁸⁴
- ◇ ոստիկանության ներկայությունը. մեծաքանակ ոստիկանության աշխատակիցներ են ներկա եղել և՛ դատարանի ներսում, և՛ դրանից դուրս: Դատարանի շենքում ոստիկանությունն ապակե պատի ետևում գտնվող դատավարության կողմերի շուրջը շղթա է ստեղծում և ներկա է լսարանում, ումանք քաղաքացիական հագուստով են: Հարցված անձինք բողոքել են, որ ոստիկանությունը երբեմն միջամտում է փաստաբան-վստահորդ հաղորդակցությանը: Դատարանում ոստիկանության նման ներկայության համար իրավական հիմքերի առումով անորոշություն կա.⁸⁵
- ◇ դատավարության մասնակիցների ցուցակը. որոշ հարցված մարդիկ նշել են, որ «Մասնա ծոերի» գործերի մասնակիցների վերաբերյալ ձևաթուղթ է լրացվել՝ այնպիսի մանրամասներով, ինչպիսիք են անունը, ազգանունը, անձնագրի կամ նույնականացման քարտի համարը, մեղադրյալների հետ հարաբերությունը, հասցեն:⁸⁶ Սա հաստատվել է «Մասնա ծոերի» գործերով չզբաղվող ՀԿ ներկայացուցիչների հետ երկու անկախ հարցազրույցների միջոցով: Իրավաբանական վերլուծությունների և զարգացման կենտրոնն իր զեկույցում նկատել է, որ «այս գործընթացը քաղաքականապես զգայուն գործի մեջ վախի մթնոլորտ է ստեղծում»:⁸⁷

84 Հարցազրույց հայ լրագրողների հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

85 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոնի տեղեկագիր, նույն տեղում: Հարցազրույց փաստաբաններ Տիգրան Հայրապետյանի և Հարություն Բաղդասարյանի հետ, 2017թ. սեպտեմբերի 4:

86 Հարցազրույց հայ լրագրողների հետ, 2017թ. սեպտեմբերի 5:

87 Իրավական վերլուծությունների և զարգացման կենտրոնի տեղեկագիր, նույն տեղում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնող “Մասնա ծոերի” գործերում ներգրավված փաստաբանների առջև ծառայած խոչընդոտները սերտորեն փոխկապակցված են Հայաստանում օրենքի գերակայության, իշխանությունների տարանջատման և դատական անկախության հետ կապված առկա թերությունների հետ: “Մասնա ծոերի” դատական գործընթացը սկսելուց հետո իշխանությունները կիրառության մեջ են դրել մի շարք վիճարկելի անվտանգության միջոցներ, որոնք հնարավոր սպառնալիք են արդար դատաքննության երաշխիքների ապահովմանը:

Փաստաբանները կարևոր դեր են խաղում դատական գործընթացում, քանի որ նրանք պատասխանատվություն են կրում պաշտպանյալների իրավունքների իրականացման համար: Հայաստանի իշխանությունները պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու, որ դրանք չեն խանգարում կամ խոչընդոտում նրանց մասնագիտական պարտականությունների կատարմանը:

Հիմնվելով այս զեկույցի արդյունքների վրա, խորհուրդ ենք տալիս, որ Հայաստանի իշխանությունները՝

- ◇ ապահովեն արդար դատաքննության իրավունքի հավասար կիրառում ներկայումս ընթացող “Մասնա ծոերի” գործերով մեղադրյալների համար.
- ◇ համոզվեն, որ “Մասնա ծոերի” գործերով մեղադրյալներին ներկայացնող փաստաբանները չեն խոչընդոտվում իրենց պարտականությունների կատարման մեջ, մասնավորապես, երբ օգնում են իրենց վստահորդներին դատարանում, և որ նրանք կարող են դատաքննության ընթացքում բանավոր միջնորդություններ և հայտարարություններ ներկայացնել.
- ◇ ընդունեն օրենսդրություն, որը թույլ է տալիս հստակ տարանջատել անվտանգության գննության և խուզարկության միջև դատական շենքեր մուտքի համատեքստում.
- ◇ կազմակերպեն անվտանգության ընթացակարգն այնպես, որ այն
 - ոչ խտրական, կամայական կամ անհամաչափ չէ, և որը սահմանափակում է հայեցողականությունը կարգադրիչների ծառայության որոշումների կայացման գործընթացում,
 - հաշվի է առնում փաստաբանի հատուկ կարգավիճակը և նրանց կարևորությունն արդարադատության իրականացման գործում՝ ապահովելով մեղադրյալների պաշտպանվելու իրավունքը, փաստաբան-վստահորդ արտոնությունը և փաստաբանների մասնագիտության արժանապատվությունը:
- ◇ ընդունեն օրենսդրություն, որն արգելում է պաշտոնատար անձանց կողմից իրենց մասնագիտական պարտականությունները կատարող փաստաբանների խուզարկությունը, եթե այն չունի հստակ ձևակերպված հիմքեր և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ հետապնդելով օրինական նպատակ, և չխախտեն մեղադրյալների արդար դատաքննության իրավունքը և, մասնավորապես, փաստաբան-վստահորդ արտոնությունը.
- ◇ ապահովեն, որ փաստաբանները, անկախ մեղադրյալի կողմից ենթադրյալ հանցագործությունների կատարմանը, կարողանան իրականացնել իրենց մասնագիտական գործունեությունը առանց պետության կողմից ահաբեկման, խոչընդոտների, ոտնձգության կամ ոչ պատշաճ միջամտության:

- ◇ ապահովեն, որ արդարության չափանիշները պահպանվեն բոլոր կարգապահական վարույթներում, որպեսզի փաստաբաններին հնարավորություն ընձեռվի անկախ դատական հայցով բողոքարկել իրենց նկատմամբ կիրառված դատարանի որոշումները և պատժամիջոցների մասին որոշումները,
- ◇ ապահովեն, որ կարգապահական վարույթը կամ այլ պատժամիջոցները չեն հարուցվում կամ պարտադրվում փաստաբաններին դատական կարգադրիչների կողմից իրականացվող ստուգումների ընթացակարգերին ենթարկվելու մերժման համար,
- ◇ ապահովեն, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթները հարուցված չեն իրենց արտահայտվելու ազատության իրավունքի իրականացման համար:

